Ազգ
Azg
16 ՄԱՐՏ 2013 ՇԱԲԱԹ 39(5122)
ISSN: 1829-1651

# Ախալքալաքցիները դիմում են վրաց խորհրդարան

**Ախալքալաքի շրջանային ժողովի հերթական նիստը պատգամավորներն անվանել են պատմական, իսկ ժողովի նախագահ Համլետ Մովսիսյանի որակմամբ՝ «մարտի 14-ը Ջավախքի պատմության տարեգրքում կգրվի ոսկե տառերով»:**

**«Պատմական» նիստը, Ջավախքի «Հարավային դարպաս» թերթի հիման վրա ստեղծված «SKnews.ge» տեղեկատվական պորտալի տեղեկացմամբ, տեւել է մոտ 2 ժամ: Նիստին ներկա են գտնվել ժողովի պատգամավորները, հասարակական կազմակերպությունների եւ լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Շրջանային ժողովում քննարկված հայոց լեզվին տարածաշրջանային կարգավիճակ տալու հարցով խորհրդարանին դիմելու նախաձեռնությամբ հանդես էր եկել «Վրացական երազանք-հանրապետականներ» խմբակցությունը:**

**«Հանրապետականների» գրած դիմումում մասնավորապես նշված էր, որ խորհրդարանը ընդունի սահմանադրական փոփոխություններ՝ ի պաշտպանություն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների մասին Եվրոպական խարտիայի վավերացման:**

**Եվրոպայի խորհրդին միանալուն զուգընթաց Վրաստանը ստորագրել է նշված Եվրոպական խարտիան, սակայն այդպես էլ չի վավերացրել: Այդ իսկ պատճառով «Հանրապետականների» դիմումում նշվել է. «...ընդգծելով լեզվական բազմազանության եւ մշակույթի փոխադարձ հարստացման նշանակությունը եւ հաշվի առնելով, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների պաշտպանությունն ու զարգացումը չպետք է իրականացվեն ի վնաս պաշտոնական լեզվի, եւ այն սովորելու անհրաժեշտությունը, խնդրում ենք վավերացնել Խարտիան»:**

**Քննարկման մասնակիցներից ոմանք Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու՝ վերջերս Ջավախքում անջատողականության մասին հայտարարությունների ֆոնին այնքան պատեհ չեն համարել հայերենին տարածաշրջանային լեզվի կարգավիճակ տալու նման առաջարկով հանդես գալը: Որոշ մասնակիցներ էլ կարեւորել են, որ նախորդ իշխանությունների օրոք այս հարցի մասին դժվար էր հրապարակային քննարկում կազմակերպել այն դեպքում, երբ նոր իշխանության պարագայում դա դարձել է հնարավոր:**

**Նիստի արդյունքում, այդուհանդերձ, շրջանային ժողովի ներկա բոլոր պատգամավորները միաձայն կողմ են քվեարկել դիմում ներկայացնելու խորհրդարանին:**

**Մնում է, որ շատ այլ նախկին փորձերի նման այս որոշում-դիմումը հասնի հասցեատերերին ու դառնա վրաց խորհրդարանի քննարկման առարկա:**

**Վ. Պ.**

# Միայն երկու մարդու խումբ է մեկնաբանելու Րաֆֆին՝ Վեհափառի եւ Սերժ Սարգսյանի

Րաֆֆի Հովհաննիսյանի երեկվա հանրահավաքին սպասողներ կային այն պարզ պատճառով, որ Սահմանադրական դատարանի որոշումից եւ նրա հնգօրյա հացադուլից հետո համակիրներն ուզում էին իմանալ իրենց եւ Րաֆֆու ձեւավորած շարժման հետագա ուրվագիծն ու քայլերը:



Մինչեւ Ր. Հովհաննիսյանը խոսեցին շատերը, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի որոշման գնահատականներ հնչեցրին Զարուհի Փոստանջյանն ու Անդրիաս Ղուկասյանը: Ըստ **Զ. Փոստանջյանի**՝ ՍԴ անդամները ՍԴ որոշման հրապարակման պահին անժպիտ էին, քանի որ գիտակցում էին, որ առեւտրային գործարք են կնքում սատանայի հետ: Բոլորի հռետորաբանությունը նույնն էր՝ շարունակելու պայքարը, իսկ ընդհանուր հռետորաբանությունից մի փոքր տարբեր էր Նիկոլ Փաշինյանը, որը հստակ պես ինչ-որ գործողություններ ուրվագծեց, բայց դրան կանդրադառնանք Ր. Հովհաննիսյանի ելույթի մասին պատմելուց հետո:

Հավանաբար **Րաֆֆի Հովհաննիսյանը** հենց Նիկոլի ելույթի որոշ պահեր նկատի ուներ, որ ասաց, թե ժողովուրդը ոչ մի քայլ չի անի առանց իրեն, եւ ինքը ոչ մի քայլ չի անի առանց ժողովրդի, ու հարթակում հնչած տեսակետներից ոչ բոլորին է համաձայն, բայց «սա Ազատության հրապարակն ու ազատ խոսքի հրապարակն է»: Նա եւս ՍԴ-ին անդրադարձավ՝ Հրայր Թովմասյանին փոխանցելով իր ցավը, որ ժողովրդի ձայնը պետք է պաշտպաներ որպես արդարադատության նախարար եւ ոչ թե Ս. Սարգսյանի:

Երեւանի ավագանու ընտրություններին «Ժառանգությունը» մասնակցելու է՝ «Հաջորդ քաղաքապետը լինելու է մեզանից մեկը»: Ցուցակի անունները կհստակեցվեն հաջորդ շաբաթ, բայց մի բան հստակ ասաց Րաֆֆին, որ այն ինքը չի գլխավորի:

Անդրադառնալով իր հացադուլի վերաբերյալ տարբեր գնահատականներին, այդ թվում՝ Մայր աթոռից տարածված հաղորդագրությանը (տես կողքի սյունակներում), Ր. Հովհաննիսյանն ամբողջ տվեց այն գրողներին, թե՝ ոչ ծոմ է իր պահածը, ոչ հացադուլ, այլ վերջնապայքարին իր մասնակցության ձեւ է: Բայց միաժամանակ ասաց, թե հաղորդագրություններով պետք չէ խոսել իր հետ, ու ոչ մի հաղորդագրություն չի մեկնաբանելու, այլ միայն երկու մարդու խումբ, եւ այդ երկու մարդը Սերժ Սարգսյանն ու Վեհափառն են:

*Տես էջ 8*

# Մայր աթոռի հայտարարությունը հետընտրական զարգացումների առնչությամբ

**Հետեւելով հետընտրական զարգացումներին եւ դրանց ընթացքում կատարված մեկնաբանություններին՝ հարկ ենք համարում նշել հետեւյալը:**

Բարձր ենք գնահատում մեր ժողովրդի ողջամտությունը, որ դարձավ երաշխիքը ընտրությունների խաղաղ եւ քաղաքակիրթ կազմակերպման եւ իրականացման:

Նկատի առնելով ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, դիտորդական առաքելությունների զեկույցներն ու գնահատականները, ինչպես նաեւ այլ տեղեկատվական նյութերը՝ Մայր աթոռ Ս. Էջմիածինը հստակ արտահայտել է իր կեցվածքն ընտրության արդյունքների վերաբերյալ եւ անընդունելի է նկատում, երբ փորձ է արվում այսօր քաղաքական շահարկումների թիրախ դարձնել Ս. Եկեղեցին, Հայոց հայրապետին եւ անգամ ՀՀ նախագահի երդման արարողությանը գործածվող Վեհամոր Ավետարանը:

Մեծի պահոց այս շրջանում մեր ժողովրդի զավակներին հրավիրում ենք աղոթքի եւ կոչ ուղղում առաջնորդվել եղբայրասիրության ու համերաշխության ոգով՝ զերծ մնալով անհանդուրժողականության եւ ատելության դրսեւորումներից:

Հորդորում ենք նաեւ տիար Րաֆֆի Հովհաննիսյանին՝ դադարեցնել հացադուլը եւ ընտրել քաղաքական պայքարի առավել կառուցողական միջոցներ: Եկեղեցին չի արդարացնում հացադուլը, քանզի այն աստվածատուր կյանքին սպառնացող գործողություն է:

# ՄԱԿ-ում կօգտագործվի «Պաղեստինի պետություն» բառակապակցությունը

**Երեքուկես ամիս առաջ ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովում Պաղեստինը ճանաչվեց դիտորդ պետություն: Երեկ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը թույլատրել է համապատասխան փոփոխություններ կատարել կազմակերպության փաստաթղթերի մեջ:**

**Այսուհետեւ ՄԱԿ-ի փաստաթղթերում եւ նիստերի ժամանակ օգտագործվող ցուցանակներում կօգտագործվի State of Palestine բառակապակցությունը:**

**Բան Կի Մունի խոսքերով, Պաղեստինի կարգավիճակը բարձրացնելու 138 երկրների որոշումը բազմամյա օկուպացման նկատմամբ նրանց անհանդուրժողականության խորացման վկայությունն է:**

**Նա ընդգծել է, որ իր որոշումը գործում է միայն ՄԱԿ-ի կառույցների աշխատանքի շրջանակներում եւ չի վերաբերում պաղեստինա-իսրայելական բանակցություններին: Բացի դրանից, ՄԱԿ-ում Պաղեստինի ներկայացուցիչները չեն կարողանա մասնակցել քվեարկություններին եւ թեկնածություններ առաջադրել պաշտոնների համար:**

# Մարտի 1-ի դեպքերն ուսումնասիրող մի նոր հանձնաժողով



**Ազգային ժողովի պետաիրավական հարցերի հանձնաժողովի նիստում հանձնաժողովի անդամները կոնսենսուսով երեկ դրական եզրակացություն տվեցին ՀԱԿ խմբակցության նախաձեռնությանը՝ մարտի 1-ի դեպքերն ուսումնասիրող ԱԺ մի նոր ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին: Հանձնաժողովն ունենալու է 7 անդամ եւ ձեւավորվելու է այն սկզբունքով, ինչ էթիկայի հանձնաժողովը՝ ՀՀԿ-ից՝ 2, ԲՀԿ-ից՝ 1, ՕԵԿ-ից՝ 1, ընդդիմադիր խմբակցություններից եւս մեկական անդամ: Պետաիրավական հանձնաժողովի նախագահ Դավիթ Հարությունյանի կարծիքով՝ այս նոր հանձնաժողովի աշխատանքը միայն իրավական ուղիով պետք է տարվի՝ բացահայտելով ճշմարտությունը եւ զերծ մնալով քաղաքական շահարկումներից: Նախագիծը մտավ առաջիկա նիստերի օրակարգ՝ ընդգրկվելով նաեւ մեծ օրակարգում:**

**Մ. Խ.**

# Համաշխարհային հայկական կոնգրեսի գործունեության կենտրոնացում Հայաստանում

Համաշխարհային հայկական կոնգրեսի գրասենյակը տեղեկացնում է, որ ի կատարումն 2012թ. հոկտեմբերին Երեւանում կայացած Համաշխարհային հայկական կոնգրեսի 2-րդ համագումարի որոշման, «Համաշխարհային հայկական կոնգրես» հայկական հասարակական միավորումների միջազգային միությունը (նախագահ՝ Արա Արշավիրի Աբրահամյան) ս.թ. մարտի 11-ին գրանցվել է Հայաստանի Հանրապետությունում որպես իրավաբանական անձանց միջազգային միություն:

Նորանկախ Հայաստանի պատմության վերջին տասնամյակը նշանավորվեց Հայաստան-Սփյուռք հարաբերությունների ինտենսիվ զարգացմամբ եւ խորացմամբ: Հատկապես՝ ՀՀ կառավարության կազմում Սփյուռքի նախարարության ստեղծմամբ Հայաստան-Սփյուռք կապերը դարձել են ավելի ինստիտուցիոնալ, հարաբերությունները ձեռք են բերել առավել նպատակային եւ դինամիկ բնույթ: Ամեն տարի Հայաստանում անց են կացվում բազմաթիվ միջոցառումներ, գիտաժողովներ, հավաքներ հայկական համայնքային եւ կրոնական կառույցների ներգրավմամբ:

Հայրենիքն այլեւս աշխարհասփյուռ հայության համախմբման հիմնական աշխարհագրական, քաղաքական ու հոգեւոր առանցքն է:

Այս առումով վաղուց էր հասունացել Համաշխարհային հայկական կոնգրեսի գործունեության կենտրոնացումը Հայաստանում, համապատասխան կառույցի եւ ենթակառուցվածքի ստեղծմամբ նպատակային եւ արդյունավետ համագործակցությունը ինչպես պետական կառույցների, այնպես էլ սփյուռքյան կազմակերպությունների (հայաստանյան գրասենյակների) հետ, որոնց թիվը երկրում տարեցտարի ավելանում է:

Մեր առաջնահերթ ծրագրային ուղղությունը եղել եւ լինելու են հայ ազգային ինքնության պահպանումը եւ զարգացումը, Սփյուռքի կազմակերպությունների, համայնքային կառույցների հետ համատեղ, նպատակային ծրագրերի մշակումը եւ իրականացումը, որոնք ուղղված են հայության համախմբմանը, համազգային խնդիրների լուծման գործում միաժամանակյա ակցիաների կազմակերպումը եւ համակարգված լոբբինգը, կրթական, մշակութային, գիտական, տնտեսական, նորարարական-ներդրումային ծրագրերը, որոնք համաձայնեցված կլինեն Հայաստանի պետական կառույցների հետ:

*Համաշխարհային հայկական կոնգրեսի մամուլի ծառայություն*

ԱԶԳ

## Ընթացիկ

# «Ո՞ւմ համար եք անում հեշտացումը»

## *Դժգոհում են օրինական գործող տաքսիների ներկայացուցիչները*

Սպառողների միության նախագահ **Արմեն Պողոսյանը** եւ «Քաղաքացիական դիրքորոշում» հասարակական կազմակերպության նախագահ **Գեւորգ Դոստուրյանը** երեկ «Հենարան» ակումբում դժգոհություն հայտնեցին տաքսի ծառայությունների ոլորտում կառավարությունում քննարկվող փոփոխությունների կապակցությամբ:




Արմեն Պողոսյանը նշեց, որ ինքը, որպես սպառող, չի ցանկանում փնտրել տեսնել, թե ո՞ր տաքսին է օրինական, որը՝ ոչ, քանի որ նոր կարգով նախատեսված ինքնակպչուն կտրոնները կամ ստիկերները տեսանելի չեն: Նա բերեց արտերկրի օրինակը, որտեղ տաքսիներն ամբողջությամբ այլ գույն ունեն: Կառավարության առաջարկով, դեղին համարների փոխարեն, տաքսի ծառայություն մատուցելու համար տրամադրվելու են միայն վերոնշյալ կպչուն կտրոնները: Դրա նպատակն է ազատել տաքսու վարորդներին 17 հազար դրամ կազմող ծախսերից: Սակայն, Արմեն Պողոսյանի կարծիքով, կարելի է պահպանել դեղին համարանիշները, դրա համար պետտուրքն ու վճարները 17 հազար դրամից իջեցնելով 3,5 հազար դրամի:

Տաքսու վարորդների ամենօրյա առողջական զննում եւ տաքսիների ամենօրյա տեխզննում անցնելու պահանջը հանելը նույնպես Սպառողների միության նախագահը ճիշտ չի համարում: Ընդունելով, որ այս պահանջներն իրականում չեն գործում, նա առաջարկում է պահպանել առողջական զննում անցնելը, պարզապես ամեն օրվա փոխարեն դարձնելով ամսական 2 անգամ: Արմեն Պողոսյանի տեղեկացմամբ՝ ամենօրյա առողջական զննման պահանջը հանելուն դեմ է նաեւ առողջապահության նախարարությունը: Ինչ վերաբերում է տեխզննմանը, ապա դա էլ պետք է պարբերաբար արվի, քանի որ առողջության եւ կյանքի անվտանգության խնդիր կա դրված:

Գեւորգ Դոստուրյանը դժգոհ է, որ դեղին համարանիշներով տաքսի վարորդները, գործելով օրինական դաշտում, ավելի մեծ ծախսեր են կատարում եւ պետական վճարներ վճարում, ի տարբերություն սպիտակ համարներով գործողների, որոնք կազմում են տաքսի ծառայություն մատուցողների մոտ 30 տոկոսը: «Ո՞նց հավատանք, որ կպչուն կտրոններով այդ հարցը կկարգավորվի», նման հարցադրում արեց Գեւորգ Դոստուրյանը, ավելացնելով, որ տաքսիների ավելի քան 70 տոկոսը, այսինքն՝ օրինական աշխատողները, արդեն անցել է այդ դժվարությունները, կատարել պահանջվող ծախսերը: «Հիմա ո՞ւմ համար եք անում հեշտացումը», շարունակեց իր հարցադրումները «Քաղաքացիական դիրքորոշում» հասարակական կազմակերպության նախագահը: «Մինչեւ հիմա էլ օրինական աշխատողները մղկտում են՝ ասելով, թե ինչի՞ համար մենք պետք է հարկեր վճարենք, իսկ նրանք՝ չէ», ասաց Գեւորգ Դոստուրյանը: Նա նշեց, որ այդ իրավիճակի մեղավորը պետությունն է, որ ուժեղ վերահսկողություն չի իրականացրել եւ բոլոր տաքսիներին չի բերել օրինական դաշտ:

Օրինական դաշտում գործող տաքսիների վարորդները վճարում են ամսական մոտ 15 հազար դրամ հարկեր, ավելացրած՝ տարեկան 25 հազար դրամ կազմող լիցենզիայի գումարը, մինչդեռ սպիտակ համարներով գործող տաքսիները այդ ամենից ազատ են: Փաստորեն, ստեղծվել է անհավասար մրցակցային դաշտ՝ հօգուտ ապօրինի գործող տաքսիների: Առաջարկվող օրենսդրական փոփոխությունները ինչպես կփոխեն այս իրավիճակը, պարզ չէ: Եթե առաջարկի նպատակը տաքսի ծառայությունների մատուցումը հեշտացնելն է, ապա անհասկանալի է, թե ինչո՞ւ է դա արվում այն ժամանակ, երբ տաքսիների մեծ մասն արդեն գործում է օրինական դաշտում: Պարզապես հարկ է մյուս մասին եւս ընդգրկել օրինական դաշտում: Այսինքն, ուղղել այն թերացումը, որ պետությունը թույլ է տվել անցած 5 տարիների ընթացքում՝ նվազեցնելով դեղին համարների տրամադրման համար գանձվող վճարները, ինչն առաջարկում է Սպառողների միության նախագահը:

### Նորից տաքսիների խաբող հաշվիչների մասին

Սպառողների միության նախագահ Արմեն Պողոսյանին երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ մեր հետեւյալ հարցն ուղղեցինք. «Որպես սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպության ղեկավար, ինչո՞ւ չեք բարձրացնում տաքսիների հաշվիչների հարցը, երբ նույն ճանապարհի համար տարբեր հաշվիչներ տարբեր գումար են ցույց տալիս»: Արմեն Պողոսյանն ասաց, որ գոյություն ունի ստանդարտների ազգային ինստիտուտ, որտեղ հաշվիչները պետք է անցնեն ստուգաչափում, կնքվեն եւ այլեւս միջամտություն չլինի: Սպառողների միության նախագահը նշեց, որ այդուհանդերձ, լինում են միջամտություններ, որոնք արագացնում են հաշվիչի ցուցմունքը: Նա խոստացավ կրկին բարձրացնել հաշվիչների ցուցմունքների միջամտությունը անհնար դարձնելու հարցը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՆՏՈՒՆԻ

# Հուսահատ բնակիչները պահանջում են իրենց սեփական բնակարանները

**Տիգրան Մեծի, Հանրապետության ու Խանջյան փողոցների իրենց բնակարաններից «վտարված» քաղաքացիներն արդեն 5 տարի սպասում են նոր բնակարանների, բայց դեռեւս՝ ապարդյուն: Նրանց կնքած պայմանագրերի համաձայն՝ նոր բնակարանները պետք է ստանային 3,5 տարում, բայց արդեն 5 տարի անցել է... եւ բնակիչները ստիպված մերթ բողոքի են դուրս գալիս կառավարության շենքի դիմաց, մերթ՝ մամուլի ակումբներում: Նշված երեք փողոցներից 180 ընտանիք մնացել է առանց սեփական բնակարանի, նույնիսկ 120 ընտանիքի համար նախատեսված շենքի տարածքում շինարարություն դեռ չի սկսվել:**

**Նունե Կարապետյանի ընտանիքը 180 անօթեւան ընտանիքներից մեկն է: 8 ամիս առաջ Նունեն կորցրել է ամուսնուն եւ հիմա 2 անչափահաս երեխաներին միայնակ է մեծացնում: Սոցիալական խնդիրները, ամուսնուն կորցնելու վիշտը Նունեին կանգնեցրել են անելանելի վիճակի առաջ: Նա երեխաների հետ վարձով բնակարանում է ապրում եւ արդեն 5 տարի տեղափոխվում է մի բնակարանից մյուսը, հույսով սպասում, որ ի վերջո իրենք էլ ապրելու իրենց անկյունը կունենան:**

**Նունեն պատմում է, որ իր վարձակալած բնակարանի տերն անգամ թույլ չի տվել, որ Նունեի ամուսնուն վարձված տնից թաղեն. ստիպված հուղարկավորությունն արել են եկեղեցուց:**

**Երեկ «Վարկած» ակումբում Նունեն ասաց, որ իր համար արդեն միեւնույնն է, թե քաղաքի որ անկյունում իրեն բնակարան կտան՝ կենտրոնում, թե՞ ծայրամասերում: Ամեն ամիս բնակարանի վարձը վճարելու համար կառուցապատող «Գլենդեյլ հիլզ սիթի սենթր» ընկերությունից Նունեն ստանում է 30 հազար դրամ, ինչը բնականաբար բավարար չէ ամբողջ վարձը վճարելու համար, բայց եթե հանկարծ Նունեն որոշի հրաժարվել պայմանագիրը երկարացնելու պահանջից, ապա կառուցապատողն իրեն 30 հազարից էլ կզրկի: 3 ամիս անց Նունեն ստիպված է կրկին երկարացնել բնակարան ստանալու իր պայմանագրի ժամկետը, բայց եթե հակառակվի ու հրաժարվի երկարացնելու պահանջից, ապա միգուցե զրկվի բնակարանից էլ, 30 հազարից դրամից էլ:**

**Ի տարբերություն Նունեի՝ Անդրանիկ Գրիգորյանը համաձայն չէ ստանալ բնակարան ծայրամասերում: Անդրանիկն ասում է ապրել է եւ ուզում է ապրել քաղաքի կենտրոնում: Այս պահին Անդրանիկն էլ վարձով է ապրում, ինչպես ինքն է ասում, արդեն 7 բնակարան է փոխել, ինչպես Նունեն, Անդրանիկն էլ նույնչափ գումար է ստանում կառուցապատողից տան վարձի համար, բայց ասում է, որ գումարը տալիս են 1-2 ամիս ուշացումով:**

**«5 տարի սպասում եմ բնակարանի, բայց շենքը դեռ չի կառուցվում, տեղում փոս է, եւ հասկանալի է, որ 1-2 տարում շենքը չի կառուցվի», նշեց Անդրանիկը, որը նաեւ մյուս ընտանիքների անունից հավելեց. «Հայաստանի կառավարությունից պահանջում ենք, որ լսի մեզ, մենք համբերություն էլ չունենք, թող կամ բնակարաններ տան մեզ, կամ փոխհատուցեն բավականաչափ դրամով»:**

**Մամուլի ակումբում հավաքված բնակիչները նախորդ օրն էլ հավաքվել էին կառավարության տան դիմաց, «Ազգը» այս մասին գրել է երեկվա համարում:**

**Նշված 180 ընտանիքներից 60-ին էլ խոստացել են ապահովել բնակարաններով, որոնք կառուցվում են «Արարատ» գինու գործարանի մոտ: Սակայն բնակիչներից Եփրեմյան Մայիսի փոխանցմամբ՝ շենքի շինարարությունը դադարեցվել է, եւ 60 ընտանիքներից ոչ մեկը բնակարան դեռ չի ստացել:**

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

## ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Խորը կսկիծով տեղեկացա անվանի պոետ, երգիծաբան, հասարակական գործիչ, սիրված մարդ եւ հրաշալի քաղաքացի **Արամայիս Սահակյանի** անժամանակ մահվան մասին: Ինձ համար, ինչպես նաեւ մեր բոլոր հայերի համար, Արամայիս Սահակյանի կերպարը կմնա լուսավոր, հայ պոեզիայի մեջ ավանդ ունեցող մարդու եւ մտավորականի կերպար: Հայտնում եմ իմ վշտակցությունը մեր սիրելի Արամայիս Սահակյանի ընտանիքին, հարազատներին եւ նրա արվեստի երկրպագուներին:

ԱՐԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**Ռուսաստանի Հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ**

# «Հոնդա Մոտոր» ընկերության ներկայացուցչությունը Հայաստանում

**Ինչպես տեղեկացանք Grand Motors ընկերության մամուլի ծառայությունից, մարտի 18-ին, Թբիլիսյան խճուղի 1/2 հասցեում տեղի կունենա Հայաստանում համաշխարհային ավտոմոբիլային արտադրության առաջատարներից «Հոնդա Մոտոր» ընկերության պաշտոնական ներկայացուցչության բացման արարողությունը: Բացմանը ներկա կլինեն Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը, «Հոնդա Մոտոր»-ի Եվրոպայի նախագահ Մանաբու Նիշիմայեն:**

**Հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ դեռեւս 2012-ին «Գրանդ Հոլդինգի» կազմի մեջ մտնող «Գրանդ Մոտորս» եւ ճապոնական «Հոնդա Մոտոր» ընկերությունների միջեւ ստորագրվեց համաձայնագիր Հայաստանում «Հոնդա Մոտորի» ներկայացուցչություն բացելու մասին: Հոնդա ավտոմեքենաների վաճառքի սրահը եւ տեխնիկական սպասարկման կենտրոնը զբաղեցնում են 7 հազար քմ տարածք: Ընկերությունն ապահովում է ավելի քան 60 աշխատատեղ: «Գրանդ Հոլդինգի» կողմից կատարվել է 7 միլիոն դոլարի ներդրում: Հայաստանում «Գրանդ Մոտորսը» մատուցում է հետեւյալ ծառայությունները.**




**1. ավտոմեքենաների վաճառք,**
**2. երաշխիքային եւ հետերաշխիքային սպասարկում,**
**3. օրիգինալ յուղերի եւ քսահեղուկների վաճառք,**
**4. օրիգինալ պահեստամասերի վաճառք:**

**Հայաստանում «Գրանդ Մոտորսը» ներկայացնում է Honda մակնիշի Accord, Civic, Jazz, CR-V, Pilot մոդելները:**

**«Հոնդա Մոտորը» աշխարհի խոշորագույն ավտոարտադրողներից է: Հիմնադրվել է 1948 թվականին: 2012-ին ընկերությունն արտադրել է 4 մլն 110 հազար 857 ավտոմեքենա: Տարեկան շրջանառությունը 2012-ին կազմել է 80 միլիարդ 705 միլիոն դոլար: Ընկերությունում աշխատում է 144 հազար 785 մարդ:**

# Կբացվի ցերեկային կենտրոն երեխաների համար

Մարտի 19-ին՝ ժամը 13-ին տեղի կունենա Հայ ավետարանչական ընկերակցության հովանու ներքո ստեղծված երեխաների «Շող» ցերեկային կենտրոնի պաշտոնական բացումը, որը կգործի Նոր Նորքի 7-րդ զանգվածում: Կենտրոնի նպատակն է լինելու բարձրացնել 6-14 տարեկան կարիքավոր երեխաների կրթական մակարդակը:

Այս ծրագիրն իրականացվում է աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության ու Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցության միջեւ 2012-ին ստորագրված հուշագրի համաձայն:

«Շող» կենտրոնի բացմանը մասնակցել ցանկացող լրագրողների մեկնումը կկազմակերպվի Բաղրամյան 18 հասցեում գտնվող Հայ ավետարանչական ընկերակցության գրասենյակից, ժամը 12.30-ին:

## ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանի հայերի միությունը եւ Համաշխարհային հայկական կոնգրեսը իրենց ցավակցությունն ու վշտակցությունն են հայտնում **Արամայիս Սահակյանի** ընտանիքին եւ բոլոր հարազատներին՝ սիրելի գրողի անժամանակ մահվան կապակցությամբ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշուապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

ԱԶԳ

## Անցուդարձ

# Օմբուդսմենի պատասխանը իր տարեկան զեկույցից վրդովված պետական պաշտոնյաներին

Շարունակում ենք ստանալ գրեթե միանման արձագանքներ բոլոր այն պետական մարմիններից, որտեղ ոչ միայն կան լրջագույն թերացումներ, այլեւ քննադատության նկատմամբ էական անհանդուրժողականություն: Նման արձագանքներից ակնհայտ է դառնում, որ այդ ցավոտ, կոռումպացված, իրավախախտումներով լի ոլորտները ղեկավարող պաշտոնյաները ակնհայտորեն մտահոգված են ոչ թե իրենց բնագավառները առավել արդյունավետ բարեփոխելով, այլ անհանգստացած են իրենց աշխատանքը առավել գեղեցիկ եւ անթերի մատուցելով:

Ավելին՝ առանձին գերատեսչություններ միմյանց հետ մրցակցում են, թե ով ավելի խորամանկ եւ ստեղծագործ եղանակով կպախարակի իրենց այդքան ցավեցրած տարեկան զեկույցը: Նրանք գրեթե միաբերան պահանջում են փաստեր եւ ապացույցներ օմբուդսմենի բարձրացրած համակարգային խնդիրների վերաբերյալ: Բոլոր այդ պաշտոնյաներին խորհուրդ եմ տալիս կարդալ օմբուդսմենների գործունեությունը կարգավորող Փարիզյան սկզբունքները, մեր Սահմանադրության եւ օրենսդրության համապատասխան հոդվածները, ուսումնասիրել տարբեր երկրների օմբուդսմենների զեկույցները, ինչպես նաեւ վերհիշել բազմաթիվ իրավապաշտպան կառույցների համանման զեկույցները: Դրանցից եւ ոչ մեկում ընդհանրացումները, ամփոփումները, համակարգային խնդիրների վերհանումները չեն արվում քրեական դատարանին հատուկ ապացույցներով:

Նորից կրկնում ենք ոչ տեղյակ հանրության եւ առանձին պաշտոնյաների համար: Օմբուդսմենի զեկույցը հիմնված է տարվա ընթացքում ստացված բողոքների, մամուլում եղած եւ չհերքված հրապարակումների, հասարակական կազմակերպությունների տեղեկությունների, առանձին ոլորտների հետ սերտորեն առնչված անհատների հետ գաղտնի հարցազրույցների վրա: Ճիշտ նույն աղբյուրներից են օգտվում աշխարհի բոլոր օմբուդսմենները, եւ



ճիշտ նույն ինդուկցիոն մեթոդով են մասնավոր դեպքերից դուրս բերում համընդհանուր խնդիրներ:

Նորից հայտարարում ենք, որ առանձին պաշտոնյաների մոլորեցնող ու դեմագոգիկ պաշտոնական հակադարձումները, ինչպես նաեւ լրատվամիջոցներում ու սոցցանցերում Օմբուդսմենի դեմ պատվիրված գռեհիկ հարձակումները չեն փոխելու այն ցավալի ճշմարտությունը, որ մենք հրապարակում ենք յուրաքանչյուր ոլորտի մասին: Փոխվելու է այդ ոլորտի վիճակը, եթե ոլորտը ղեկավարում է լայնախոհ եւ բանիմաց առաջնորդ: Այլապես, հուսանք, փոխվելու են մարդիկ, որոնք ոչ միայն դեռեւս արդյունավետ չեն կարողացել լուծել իրենց ոլորտում առկա խնդիրները, այլեւ ի վիճակի չեն քննադատությունը ընկալել ողջամտորեն եւ բարելավել իրենց աշխատանքը:

Եվ վերջում, իրենց ոլորտներում կոռուպցիոն եւ ապօրինի դրսեւորումների մասին այդքան անտեղյակ պաշտոնյաներին, հուսանք, շուտով կօգնեն Հայաստանի ոստիկանության եւ ԱԱԾ օպերատիվ-հետախուզական ու քննչական ծառայությունները: Զուգահեռաբար այդ պաշտոնյաները մեր բարձրացրած խնդիրների մասին բազմաթիվ տեղեկություններ կարող են ստանալ իրենց ոլորտների թեկուզ հպանցիկ ծանոթություն ունեցած գրեթե յուրաքանչյուր քաղաքացուց, եթե այդ քաղաքացիները իրենց էլ վստահեն եւ չվախենան այդ պաշտոնյաների վրեժխնդրությունից:

Հարգանքով, համբերությամբ, բոլոր հարձակումներին դիմագրավելու պատրաստակամությամբ՝

**ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**
**ՀՀ մարդու իրավունքների պաշտպան**

***Հ.Գ.*** *Զեկույցների հրապարակման առումով մենք դեռ միայն կես ճանապարհին ենք եւ մինչեւ ապրիլի 29 ես այլեւս չեմ արձագանքի այս թեմայով պետական մարմինների պաշտոնական եւ պատվիրված հարձակումներին: Այս օրերին զեկույցն ամբողջությամբ կներկայացվի ՀՀ Ազգային ժողով, որտեղ ըստ օրենքի պետք է քննարկվի ԱԺ լիագումար նիստում: Կլինի նաեւ մամլո ասուլիս, որի ընթացքում բոլոր հարցադրումներին կտրվեն ավելի մանրամասն եւ համարժեք պատասխաններ:*

# Կայացավ «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տնօրենի մրցույթը

Երեկ տեղի ունեցավ «Խոսրովի անտառ» պետական արգելոց ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթը:

Հայտ էին ներկայացրել 11 մարդ՝ Վահան Դավթյան, Լուսինե Կարապետյան, Վարանցով Բարսեղյան, Ալբերտ Դումիկյան, Հայկազ Կարապետյան, Հրաչյա Հովակիմյան, Գառնիկ Շաբոյան, Վարդան Մամիկոնյան, Պարգեւ Ստեփանյան, Գագիկ Հակոբյան, Արայիկ Կարապետյան:

Յուրաքանչյուրին տրված տոմսում կար ընդամենը տասը հարց, եւ ցավով պետք է նկատենք, որ շատերը անգամ հարցերի 50 տոկոսին չէին կարողանում պատասխանել, կային նաեւ մարդիկ, որոնց բնապահպանության նախարարն էր փորձում խոսքը ճիշտ ձեւակերպել սովորեցնել:

Մասնակիցներից Լուսինե Կարապետյանը հավաքեց 34,1 %, Վարանցով Բարսեղյանը՝ 75%, Հայկազ Կարապետյանը՝ 61,2 %, Հրաչյա Հովակիմյանը՝ 98,1%, Գառնիկ Շաբոյանը՝ 70,8%, Պարգեւ Ստեփանյանը՝ 37 %, Գագիկ Հակոբյանը՝ 69.8%:

Ըստ արդյունքների, Հրաչյա Հովակիմյանը հավաքել էր ամենաշատ միավորները եւ հավանաբար կդառնա «Խոսրովի անտառ» պետական արգելոց ՊՈԱԿ-ի տնօրեն, սակայն սպասենք բնապահպանության նախարարության պաշտոնական հայտարարությանը: Ի դեպ, միայն նա կարողացավ անթերի պատասխանել 9 հարցերին, իսկ մեկին՝ թերի: Հրաչյա Հովակիմյանը բազմաթիվ տարիներ աշխատել է այս բնագավառում:

Վահան Դավթյանն ինքնաբացարկ էր հայտնել, իսկ Ալբերտ Դումիկյանն ու Արայիկ Կարապետյանը չկարողացան մասնակցել մրցույթին հետեւյալ պատճառներով՝ Ալբերտ Դումիկյանն ուներ փաստաթղթերի հետ կապված խնդիր, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացի չէր, նաեւ՝ ընդամենը մի քանի ամսից թոշակառու էր դառնալու: Իսկ Արայիկ Կարապետյանն ուներ աշխատանքային փորձի հետ կապված խնդիրներ:

Բնապահպան-ակտիվիստները ցանկանում էին «Խոսրովի անտառ» պետական արգելոց ՊՈԱԿ-ի տնօրեն տեսնել Ալբերտ Դումիկյանին՝ ասելով, որ նրա նման մասնագետը եկել է Հայաստան, որպեսզի իր գիտելիքներով զարգացնի եւ պահպանի արգելոցը, ինչպե՞ս նրան չեն տալիս քաղաքացիություն: «**Ազգը**», ծանոթանալով Ա. Դումիկյանի կենսագրությանը, նկատեց, որ նա «Բուրեհինյան» արգելոցում թոշակի անցնելով է եկել Հայաստան եւ նման ցանկություն հայտնել: Սակայն իսկապես որ նա այս բնագավառի մասնագետ է, մի շարք գիտական ձեռնարկների հեղինակ եւ շատ տարիներ աշխատել է այդ ոլորտում:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի շուրջը շատ խոսակցություններ հնչեցին, մասնավորապես՝ արդար եւ թափանցիկ անցնելու գործընթացի: Ակտիվիստներն սկզբում պահանջում էին, որ բնապահպանության նախարարությունը հրապարակի թափուր պաշտոնի համար բոլոր դիմողների տվյալները, նախարարությունը հրապարակեց բջջային հեռախոսահամարներն ու կենսագրական տվյալները, ապա եւ ապահովեց պայմաններ, որ լրագրողները եւ բոլոր ցանկացողները հետեւեն մրցույթի ամբողջ գործընթացին:

Սպասենք հետագա զարգացումներին ...

**Ս. Ա.**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# «Թեղուտ» ՓԲ ընկերության գործունեությանն առնչվող հրապարակման վերաբերյալ

**Հայտնում ենք, որ ՀՀ ՄԻՊ աշխատակազմի կողմից տարածված «Մարդու իրավունքների վիճակը բնապահպանության նախարարության ոլորտում. Օմբուդսմենի զեկույց 2012» վերնագրով տեղեկատվության մեջ տեղ գտած «Դեռեւս իր լուծումը չի ստացել Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրը շահագործող «Թեղուտ» ՓԲԸ-ի ներկայիս գործունեության լիցենզավորման խնդիրը» դատողությունը չի կարող համապատասխանել իրականությանը:**

**Բավական է միայն նշել, որ ՀՀ բնապահպանության նախարարությունը հանքարդյունահանման բնագավառում լիցենզիա տրամադրելու լիազորություն 2012 թ. ընդհանրապես չի ունեցել, քանի որ համապատասխան գործառույթը դեռեւս 2008 թ. անցել է ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությանը, ինչը հավանաբար պետք է հայտնի լիներ նաեւ ՀՀ ՄԻՊ աշխատակազմին:**

**Եվս մեկ անգամ հավաստում ենք, որ «Թեղուտ» ՓԲ ընկերությունը որեւէ ոլորտում որեւէ գործունեություն ծավալել է բացառապես ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրավական հիմքերի պատշաճ ապահովումից հետո:**

**Մենք ողջունում ենք այն վարքագիծը, երբ ՀՀ ՄԻՊ աշխատակազմի իրականացրած ուսումնասիրությունների շրջանակներում հաշվի են առնվում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների տեսակետները: Այդուհանդերձ, վերջիններս որպես իրականություն ներկայացնելը պահանջում է որոշակի ռացիոնալ վերլուծություն, լրացուցիչ ուսումնասիրություններ, ինչի բացակայությունը տվյալ պարագայում հանգեցրել է իրականությանը որեւէ առնչություն չունեցող ձեւակերպումների: ՄԻՊ բարձր ամբիոնից հանրությանն ու համապատասխան պետական մարմիններին ներկայացվող տեղեկատվությունը, մեր համոզմամբ, պետք է լինի իրավունքի տրամաբանությամբ խմբագրված եւ իրավաբանորեն գրագետ ձեւակերպումներով: Այս տեսանկյունից մեր տարակուսանքն ենք հայտնում օմբուդսմենի զեկույցում առկա վերոնշյալ դրվագում դրսեւորված գործելաոճի արդյունավետության առնչությամբ:**

*Հարգանքով՝*
*«Վալլեքս» խմբի ընկերությունների տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին*

# Մշակույթի նախարարության պարզաբանումը




Գառնու 11-13-րդ դարերի միջնադարյան կամրջի վերականգնման վերաբերյալ Հայաստանի մի խումբ քաղաքացիներ, որոնք գտնում են, որ «վերականգնման» հետեւանքով որպես հուշարձան կամուրջը վերացել է, ինչի պատճառները ոչ թափանցիկ գործելաոճը, անփութությունն ու անբավարար վերահսկողությունն էին, մի քանի օր առաջ դիմել էին մշակույթի նախարարություն՝ պահանջելով հաշվետվություն կամրջի պատմամշակութային տեսքը խաթարելու վերաբերյալ:

Երեկ իրենց հարցերի պատասխանը ստանալու նպատակով նախարարությանը մինչ այդ դիմած քաղաքացիները հավաքվել էին մշակույթի նախարարության դիմաց: Իսկ նախարարության պատասխանը չուշացավ: Վերջինիս տարածած հաղորդագրության մեջ նշվում է. «Հաշվի առնելով կամրջի հետիոտն օգտագործման եւ խիստ վթարային լինելու հանգամանքը՝ 2006 թվականին կազմվել է կամրջի վերականգնման նախագիծը, որը քննարկվել եւ հավանության է արժանացել ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի նիստում: Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել է «Կոտայքնախագիծ» ՍՊԸ-ն, որը հուշարձանների վերականգնման ոլորտում ունի փորձ եւ համալրված է համապատասխան մասնագետներով: Մշակույթի նախարարությունը հուշարձանի վերականգնման եւ ամրակայման աշխատանքները ֆինանսավորելու նպատակով 2011 թվականին ԱՄՆ դեսպանների մշակութային հիմնադրամին է ներկայացրել համապատասխան ծրագիր, որն արժանացել է հավանության:

Այնուհետեւ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հետ կնքվել է համագործակցության հուշագիր: Աշխատանքները մեկնարկել են սահմանված ժամկետում. 1-ին փուլում դրանք իրականացվել են պատշաճ մակարդակով: Աշխատանքների կատարման 2-րդ փուլում ի հայտ եկած նոր տվյալների հիման վրա կամրջի նիշերի փոփոխության հետեւանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխելու նաեւ կամրջի եզրապատերի նկարվածքը: Իսկ նախարարության կողմից աշխատանքները կհամարվեն ավարտված շարվածքի արտաքին մակերեւույթի մշակման աշխատանքները սահմանված ժամկետում իրականացվելուց հետո»:

# Էդուարդ Աղայան-100

Ավագ եւ միջին սերնդի մտավորականներից ո՞վ չի հիշում բնության կողմից շռայլորեն օժտված, բարձրահասակ, թիկնեղ, արդեն սպիտակած, փարթամ մազերը կողքի սանրած, ավանդական ծխամորճը ատամների արանքում սեղմած, բարի ու խելացի ժպիտը դեմքին, գեղեցկադեմ ու առինքնող, իր շրջապատի մարդկանց, ուսանողների, ասպիրանտների եւ իր ընկերների ջերմ սերն ու ակնածանքը վայելող, իր ներկայությամբ շրջապատին հաճելի տրամադրություն պարգեւող, Երեւանի պետական համալսարանի դասախոս, ակադեմիկոս Էդուարդ Բագրատի Աղայանին՝ 20-րդ դարի հայ լեզվաբանության ամենապայծառ դեմքերից մեկին:

Բազմազան ու տարաբնույթ են ակադեմիկոս Աղայանի գիտական, մանկավարժական ու հասարակական գործունեության բնագավառները՝ դասախոսական սիրված ու նվիրյալ աշխատանք, բազմաթիվ ասպիրանտների խորհրդատու եւ հոգատար գիտական ղեկավար, խիստ ու պահանջկոտ ընդդիմախոս, մի քանի տասնյակ գիտական աշխատությունների ու դասագրքերի հեղինակ, Հրաչյա Աճառյանի գիտական ժառանգության հազարավոր ձեռագիր էջերի խմբագիր, առաջաբաններ գրող ու հրատարակիչ... եւ այս բոլորի հետ մի շարք վարչական պատասխանատու աշխատանքներ:

Աղայանը իր կյանքի տարբեր տարիներին վարել է տարբեր պաշտոններ, եղել է ՀՍՍՀ լուսավորության նախարարության բուհերի բաժնի վարիչ, ԵՊՀ-ի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, «Բանբեր Երեւանի համալսարանի» հանդեսի խմբագիր, ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի նախ՝ փոխտնօրեն, ապա՝ ընդհանուր լեզվաբանության բաժնի վարիչ, 30 տարի ղեկավարել է համալսարանի ընդհանուր եւ համեմատական լեզվաբանության ամբիոնը: Տարիներ շարունակ եղել է ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության եւ հայոց լեզվի գծով գիտական աստիճաններ շնորհող գիտական խորհրդի նախագահ:

Էդուարդ Աղայանը եղել է ՀՀ Գերագույն խորհրդի երկու գումարումների (1980 եւ 1985 թթ.) պատգամավոր:

Հայաստանի կառավարությունը, բարձր գնահատելով անխոնջ մտավորականի գիտամանկավարժական ու վարչահասարակական գործունեությունը, նրան շնորհել է Գիտությունների վաստակավոր գործչի պատվավոր կոչում եւ պարգեւատրել է Աշխատանքային արիության եւ Խաչատուր Աբովյանի անվան մեդալներով ու մի քանի պատվոգրերով:

Գիտական կադրեր պատրաստելու եւ լեզվաբանությանը մատուցած մեծ ծառայությունների համար, ծննդյան 70-ամյակի կապակցությամբ Խորհրդային Միության Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով 1983 թ. Էդուարդ Բագրատի Աղայանը պարգեւատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Էդուարդ Աղայանը ծնվել է 1913 թ. մարտի 16-ին Հայկական լեռնաշխարհի ամենագեղեցիկ տարածքի՝ Զանգեզուրի ամենահարավի՝ Մեղրի քաղաքատիպ ավանում: Մեկ տարեկան տղային հայրը հաճախ էր նստեցնում ծնկներին ու նրա համար ծնկծնկացնում հորից ժառանգություն մնացած թառը, իսկ մայրը՝ Շուշանիկը, կամացուկ դնդնում էր անուշ մեղեդիներ: Ահա այդ ընտանիքից է, որ Աղայանի մեջ առաջացել է մեծ սեր թառի ու երգի նկատմամբ, որոնց նա սիրահարված մնաց մինչեւ կյանքի վերջը՝ 1991 թ. դեկտեմբերի



29: Փոքրիկ Էդուարդը շատ քիչ վայելեց հոր ներկայությունը, 1914 թ. նրան զորակոչեցին բանակ, եւ այլեւս չվերադարձավ: Տեղի 7-ամյա դպրոցն ավարտելուց հետո, 1930-ին ընդունվում է տեղի կոլտնտեսային ուսումնարանը՝ միաժամանակ աշխատելով Մեղրու «Նոր կյանք» կոլտնտեսությունում՝ որպես հաշվապահ, 1932-33 թթ. աշխատում է Լիճք գյուղի 7-ամյա դպրոցում որպես հայոց լեզվի եւ թվաբանության ուսուցիչ: Այդ դպրոցն այժմ կոչվում է Էդուարդ Աղայանի անունով:

Աղայանը սիրում էր աշակերտներին ու դպրոցական կյանքը, հենց դա էլ նրան բերում է Երեւանի պետական համալսարան: 1933-ին նա համալսարանի պատմագրական ֆակուլտետի ուսանող էր եւ հենց առաջին կուրսից աչքի էր ընկել լեզուների նկատմամբ ունեցած մեծ հետաքրքրությամբ, որը չի վրիպել աշխարհահռչակ լեզվաբան, համալսարանի պրոֆեսոր Հրաչյա Աճառյանի ուշադրությունից: Նրան էլ Աճառյանն ընտրում է որպես իր ձեռագրերի խմբագրի ու հրատարակչի: Եվ Աղայանը եղավ ու մնաց Աճառյանի ձեռագրերի եւ կիսատ թողած գործերի խմբագիրն ու հրատարակիչը: Ահա դրանք՝ «Հայոց լեզվի պատմություն», 2-րդ հատոր, «Լիակատար քերականություն հայոց լեզվի», 8 հատորներ, «Քննություն Վանի բարբառի», «Արմատական բառարան», 4 հատոր, «Կյանքիս հուշերից» եւ «Հայոց գրերը»:

Համալսարանում ուսումնառության առաջին իսկ տարիներից դրսեւորվում են Աղայանի արտակարգ ընդունակությունները: Այստեղ էլ նա պաշտպանում է թեկնածուական՝ «Մեղրու բարբառը» (1941) եւ դոկտորական՝ «Հայ լեզվաբանության պատմություն» (1945) ատենախոսությունները:

Բազմազան է ակադեմիկոս Աղայանի հետաքրքրությունների շրջանակը՝ ընդհանուր լեզվաբանություն, հայոց լեզվի պատմություն, քերականություն, բարբառագիտություն, համեմատական քերականություն, բառարանագիտություն եւ այլն:

Այս բոլոր բնագավառներում մեծ գիտնականը լուրջ ներդրումներ կատարեց՝ նրա շատ աշխատություններ դարձան բուհական դասագրքեր եւ մինչեւ օրս գրեթե անփոփոխ ծառայում են այդ նպատակին: Դրանցից առաջինը «Լեզվաբանության ներածություն» դասագիրքն է, որի առաջին հրատարակությունը տեղի ունեցավ 1947-ին, ապա, վերամշակվելով, ունեցավ 4 հրատարակություն վերջինը՝ «Լեզվաբանության հիմունքներ» վերնագրով՝ 1987 թ. (736 էջ), լույս տեսավ նաեւ ռուսերեն եւ մուտք գործեց ԽՍՀՄ-ի բոլոր բուհերը՝ որպես հիմնական դասագիրք:

1967-ին լույս տեսավ նրա «Հայերենի հոլովումը եւ խոնարհումը», «Գրաբարի քերականությունը» (1964), «Ընդհանուր եւ հայկական բառագիտություն» (1984), «Հայոց լեզու» (բուհական դասագիրք), «Բառաքննական եւ ստուգաբանական հետազոտություններ», «Տերմինաբանություն» եւ բազմաթիվ այլ գրքեր ու հոդվածներ, որոնց թիվը հասնում է 164-ի, իսկ խմբագրած աշխատանքների թիվը՝ 42-ի (տե՛ս Խ. Բադիկյան, «Էդուարդ Աղայան» (կյանքը եւ գործը), Եր. «Մանմար» հրատ., 2010 թ., էջ 154-167):

Աղայանի կարապի երգը «Լեզվաբանական հետազոտություններ» ժողովածուն է (420 էջ), որը լույս է տեսել հետմահու՝ 2003 թ., ԵՊՀ հրատարակչության կողմից:

Էդուարդ Աղայանի ամենամեծ ծառայությունն իր ժողովրդին պետք է համարել հայ ժողովրդի բոլոր խավերի կողմից ամենօրյա օգտագործվող «Արդի հայերենի բացատրական բառարանը», այն 400 տարվա հայ տպագիր բառարանագրության մեջ ամենահարուստն է, պարունակում է 135 600 բառ եւ 11 000 դարձվածային միավոր: Բառարանը չափազանց հարուստ է նորաբանություններով, դրանց թիվն անցնում է 15 հազարից, շատ հարուստ է նաեւ բառերի բազմիմաստությամբ եւ ստուգաբանություններով: Ծանրաբեռնված չէ հնաբանություններով ու բարբառային բառերով: Բառարանի վրա Աղայանն աշխատել է 20 տարի (1955-1975):

Ակադեմիկոս Էդուարդ Բագրատի Աղայանը՝ հայ լեզվաբանական մտքի ամենապայծառ դեմքերից մեկը, հավերժ կապրի իր ժողովրդի հետ:

**ԽԱՉԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ**
**Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր**

ՎՐԱՑԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ

# Ջավախահայության խնդիրների լուծումից կշահեն և՛ Վրաստանը, և՛ տարածաշրջանը

## *Հարցազրույց «Երկիր» միության խորհրդի նախագահի Սեւակ Արծրունու հետ*

**- Պարոն Արծրունի, խնդրում եմ ընդհանուր գծերով բնութագրել՝ նախկին իշխանությունների համեմատությամբ Իվանիշվիլիի վարչակարգն ի՞նչ քաղաքականություն է վարում ազգային փոքրամասնությունների նկատմամբ:**

- Նախ եկեք այլեւս չօգտագործենք «ազգային փոքրամասնություն» եզրը: Հայությունը եւ վրաստանաբնակ ոչ վրացի մյուս էթնիկ խմբերը Վրաստանի ամբողջությունը կազմող ժողովուրդներ են, եւ Վրաստանում, հարեւան Թուրքիայի նման, գլխավոր էթնիկ խումբը երկրում իրավական առումով «մեծամասնություն» չի կարող կազմել: Վերադառնալով հարցին՝ փաստացի երեւույթների վրա հենվելով Իվանիշվիլիի քաղաքականությունը դժվար է հստակ բնութագրել, առայժմ այն պայմանավորված է հիմնականում Սաակաշվիլիի եւ նրա վարչակարգի վտանգազերծման առաջնահերթությամբ: Երբ Սաակաշվիլին կչեզոքացվի, միայն այդ ժամանակ մենք իսկապես կհասկանանք նոր վարչակարգի իրական նկարագիրը, տեսանելի կդառնան Վրաստանի ոչ վրացի էթնիկ խմբերի նկատմամբ քաղաքականության ուրվագծերը: Մինչ այդ, բոլորը՝ ներառյալ նաեւ ոչ վրացի ազգային խմբերը, գործում են համապատասխանաբար: Մեր գնահատմամբ՝ Սաակաշվիլիի եւ նրա կողմնակիցների քաղաքական ճակատագիրը հայտնի կդառնա շուտով, եւ Վրաստանում ապրող ազգային խմբերի նկատմամբ Իվանիշվիլիի քաղաքականության կոնկրետ դրսեւորումները կտեսնենք սկսած առաջիկա աշնանից: Թե ինչպիսի՞ն կլինի այդ քաղաքականությունը, կախված է աշխարհաքաղաքական եւ ներքաղաքական որոշ երեւույթներից:

**- Իվանիշվիլիի օրոք լուծում տրվելո՞ւ է ջավախահայության եւ վրացահայության առջեւ ծառացած խնդիրներին:**

- Իվանիշվիլին իրատես եւ պրագմատիկ ղեկավար է, նա գործում է հիմնվելով փաստացի երեւույթների վրա: Նա, անկասկած, շարունակելու է գնալ ժողովրդավարական ճանապարհով, այսինքն Վրաստանի ժողովրդի մեծամասնության կարծիքը ներկայացնող քաղաքական կամքի հետ հաշվի նստելով: Սակայն, կարծում եմ, նոր իշխանությունները չեն կրկնելու Սաակաշվիլիի սխալները եւ աշխարհաքաղաքական առաջնահերթությունները չեն գերադասվելու ներվրացական խնդիրներից: Չեն լինելու անօրինական բռնատիրական գործողություններ ո՛չ Ջավախքում, ո՛չ էլ Վրաստանի այլ շրջաններում: Այդ իմաստով, բնականաբար շատ բան է փոխվելու նաեւ վրացահայության կյանքում:

Գալով բուն հարցին՝ ասեմ, որ Վրաստանում լուծում կստանան բոլոր այն խնդիրները, որոնք լսելի կդառնան ներվրացական կենտրոնական քաղաքական բեմի վրա, եւ այն խնդիրները, որոնք կբարձրացվեն միջազգային քաղաքական շրջանակներում: Ջավախահայ եւ վրացահայ գործիչներն այդ ճանապարհով, ինչու չէ, լսելի կդառնան նաեւ Հայաստանում: Իվանիշվիլին եւ նրա համակարգը գործելու են, ինչպես արդեն ասացինք, հաշվի նստելով փաստերի հետ: Որպես այդպիսին, նրանք պատրաստ կլինեն որդեգրել նոր գործելաոճ՝ հավասարակշռություն պահպանելով պետական անվտանգության եւ բազմազգ հասարակության հրամայականների միջեւ: Հիմա, այս ամենը մեզ համար շահավետ կլինի, եթե վրացահայությունը եւ Ջավախքը կարողանան համախմբվել քաղաքական մեկ կենտրոնացած օրակարգի եւ ծրագրի շուրջը:

**- Ներկա պայմաններում ինչպիսի՞ն պետք է լինի ջավախահայության եւ վրացահայության իրավունքների համար պայքարի մարտավարությունը :**

- Ջավախահայությունը, վրացահայությունն ընդհանրապես եւ ամբողջ հայությունը պետք է համատեղ ուժերով աշխատեն, որպեսզի Վրաստանը լինի կայուն, ժողովրդավարական, ազատական, անկախ եւ բարգավաճ երկիր: Այս առաջնահերթությունը անշրջանցելի է ոչ միայն վրաց, այլ նաեւ հայ եւ տարածաշրջանի մյուս բոլոր ժողովուրդների շահերից ելնելով: Վրաստանի կայունությունն ու զարգացումը ելնում են Հայաստանի շահերից, քանի որ անցած տասնամյակում Վրաստանում եւ Իրանում տիրող ճգնաժամային իրավիճակները օբյեկտիվորեն նպաստում էին Հայաստանի շրջափակման թուրք-ադրբեջանական ծրագրին: Մյուս կողմից, Վրաստանը կարող է կայուն եւ ժողովրդավարական երկիր դառնալ, միմիայն եթե իրատեսորեն հաստատվի բազմազգ պետության իրողության մեջ:

Արդ, վրացահայությունն ամբողջությամբ պետք է ներգրավվի Վրաստանի կենտրոնական եւ շրջանային իշխանություններում եւ գործի այնպես, որ երկրի հայ բնակչության քաղաքական, քաղաքացիական, լեզվական, կրթական, կրոնական, մշակութային եւ այլ պահանջները համահունչ լինեն ամբողջ երկրում հաստատվող ժողովրդավարական ազատությունների գործընթացների հետ: Այն, ինչ տարիներ շարունակ հայ ակտիվիստները պահանջել են՝ լեզվի կարգավիճակի, առաքելական եկեղեցու կարգավիճակի եւ շենքերի խնդիրների լուծում, ներկայացվածություն տեղական եւ շրջանային պետական մարմիններում եւ արդար ընտրություններ, վերջապես, հայալեզու հիմքով դպրոցների պահպանություն, հայկական համալսարանի բացում Ջավախքում, այդ բոլոր պահանջները մնալու են ուժի մեջ: Դրանց ուղղությամբ շարունակվող պայքարը Իվանիշվիլիի համակարգում գործող յուրաքանչյուր հայ գործչի, ակտիվիստի, պետական այրի, մտավորականի կամ քաղաքացու ներդրումը պետք է դառնա կայուն Վրաստանի հաստատման գործում: Հավատացեք, ինչպես Սաակաշվիլիի ձախողման, նույնպես եւ Իվանիշվիլիի հաջողության մեջ հայ բնակչությունը կարող է վճռորոշ դերակատարություն ունենալ:

Ջավախքի հայապահպանության եւ վրացահայ համայնքի ամրապնդման խնդրով մտահոգ ուժերի անելիքը պետք է լինի, քաղաքական մասնատվածության պայմաններում իսկ, ամեն բանից բարձր պահել մեր վերնշյալ իրավունքների համար պայքարը եւ համահայկական ուժերով չթուլացնել ճնշումը Վրաստանի կենտրոնական իշխանությունների վրա:

Այս պայմանների շարունակական ամբողջացման դեպքում բնականաբար նույն ինքն Իվանիշվիլիի իշխանության օրոք կլուծվեն, համոզված եմ, ջավախահայության եւ վրացահայության բոլոր խնդիրները, եւ դրանից կշահի առաջին հերթին ինչպես Վրաստանը, այնպես էլ ամբողջ տարածաշրջանը:

ԱԴՐԲԵՋԱՆ

# «Շունը՝ շնից, երկուսը՝ մի շնից»

Վերնագրում ո՛չ ադրբեջանցիների, ո՛չ ադրբեջանականի հանդեպ ֆոբիա չկա. պարզապես դիպուկ խոսք է, որ այս դեպքում, կարծում ենք, լավագույնս է բնութագրում Ադրբեջանի իշխանություն- ընդդիմություն հարաբերությունները:

Եվ այսպես, մինչեւ վերջերս հարեւան երկրում քաղաքական կոչվող միջավայրը տիրապետում էին իշխող վարչախումբը՝ «Ենի Ազարբայջան» կուսակցության ծածկաքողի տակ, եւ այսպես կոչված «տիտղոսային ընդդիմությունը», որի առանցքը, կարելի է ասել, ոչ այնքան «Մուսավաթ» կամ ԱԺՃ կուսակցությունն էր, որքան երկու անձնավորություն՝ Իսա Ղամբար, Ալի Քերիմլի:

2003-ի նախագահական ընտրություններին Ղամբարը, ըստ երեւույթին իրազեկված լինելով ներկլանային ինչ-ինչ հակասություններից, որ ի հայտ էին եկել «նախապետի» մահվանից հետո, թերեւս վստահ, որ կարող է «խաղալ» դրանց վրա, փորձ արեց թոթափել իշխող վարչախմբի «ստվերը» լինելու բարդույթը:

Հաշվարկը քաղաքականապես գուցե ճիշտ էր, բայց գործնականում չաշխատեց. Ղամբարը գլխին մետաղաձողի մի քանի հարված ստացավ, նրա հարյուրավոր կողմնակիցներ ծեծվեցին ավելի դաժանորեն, մի քանի տասնյակը ձերբակալվեց: Իսկ արդեն 2004-ին Իլհամ Ալիեւը «բացահայտեց պետական հեղաշրջման մի խումբ կազմակերպիչների»՝ առողջապահության նախարար Ալի Ինսանովի գլխավորությամբ: Նրանք դատվեցին եւ «շալակեցին» 10-15 տարվա բանտարկություն:

Ղամբարին, այսպիսով, ցույց տվեցին, որ մեկ անգամ նրանից «քննշորեն» վերցված,- չէ՞ որ 1993-ի հունիսի 15-ին այն ժամանակ դեռ Ղամբարով ազգանունը կրող նույն Իսա բեյն էր ԳԽ նախագահի պաշտոնից հրաժարվել, որպեսզի Հեյդար Ալիեւի համար ճանապարհ բացվի,- իշխանությունը չեն պատրաստվում զիջել ոչ ոքի: Եվ նա հասկացավ, որ իրեն վերապահված է մշտապես խաղալու նույն դերը՝ ապահովել իշխող վարչախմբի «լեգիտիմությունը»:

Ներքաղաքական այդ դասավորությունում Ալի Քերիմլիին էլ հանձնարարված էր խաղալ Իսա Ղամբարի՝ որպես «արմատական ընդդիմության առաջնորդի լեգիտիմությունն» արդարացնելու դերը: Շուրջ երկու տասնամյակ այդ ստատուս քվոն պահպանվել է: Այսօր կարծես իրավիճակ է փոխվում: Քաղաքական դաշտ են մտնում նոր խաղացողներ, կազմավորվում «շարժումներ»: Իշխող վարչախմբին, սակայն, լրջագույնս անհանգստացրել է «ֆեյսբուքային» հեղափոխության ուրվականը:

Դրա դեմ պայքարում զորակոչվել են ե՛ւ պետական քարոզչամեքենան, ե՛ւ ուժային կառույցներ, ե՛ւ «գրպանային» ընդդիմությունը՝ ի դեմս Միլլի մեջլիսում ներկայություն ստացած մարդ- «կուսակցությունների»: Ամենահետաքրքրականը, սակայն, վարչախմբի շահերն սպասարկող «քաղաքագիտական» շրջանակների կողմից «տիտղոսային» ընդդիմությանն արվող ռեւերանսներն են:

Մեջլիսի պատգամավոր եւ քաղաքագետի համարում ունեցող Ռասիմ Մուսաբեկովը, մասնավորապես, կարծիք է հայտնել, որ «նոր ձեւավորվող ուժերը հասարակության մեջ չունեն այն վարկանիշը, ինչ՝ ավանդական ընդդիմությունը եւ չեն էլ կարող»: Ուշադրություն է հրավիրում հատկապես վերջին «չեն էլ կարող» ընդգծումը, ինչը նշանակում է, որ վարչախումբը պատրաստ է «մրցակցելու միայն ավանդական ընդդիմության» հետ:

Այսինքն, առաջիկա հոկտեմբերին անցկացվելիք նախագահական ընտրություններում Իլհամ Ալիեւը ձգտելու է մրցակից ունենալ «հասարակությանը քաջածանոթ ընդդիմադիր» թեկնածուի: Ընդ որում, արդեն իսկ ամեն ինչ արվում է, որպեսզի երկու «գլուխները»՝ Ղամբարը եւ Քերիմլին, «մի կաթսայում չեփվեն», եւ միասնական թեկնածու չառաջադրվի:

Ադրբեջանում, չնայած սոցիալապես բողոքավոր զանգվածների առկայությանը, քաղաքականապես ձեւավորված ընդդիմությունն առանց այդ էլ չափազանց թույլ է կամ, ինչպես Իսա Ղամբարի դեպքում՝ վարձահրավիրված-վերահսկվող: Եվ եթե դրան գումարվի «թիվ մեկ ընդդիմադիրի» համար պայքարը, որ վարչախմբի ակնհայտ ցանկությունն է, ապա լիովին կարդարանա Զարդուշտ Ալիզադեի գնահատականը, որ «իշխանությունը եւ ընդդիմությունը նույն մեդալի տարբեր կողմերն են»: Իսկ դա լիովին համապատասխանում է մեր վերնագրով ասածին:

Վ. Ա.

# Սիրիայում երկու տարվա բախումներից հետո ընդդիմության դիրքերն ամրապնդվել են

*Ասիայում ռազմական ծախսերն արդեն ավելի շատ են, քան Եվրոպայում*

**Սիրիայում վարչակարգի եւ զինված ընդդիմության հակամարտությունը շարունակվում է արդեն երկու տարի: Կշեռքի նժարը սկսում է թեքվել ապստամբների կողմը, թեեւ օտարերկրյա ռազմական միջամտությունը քիչ հավանական է: Այս հավաստումներն են արվում Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի հրապարակած «Ռազմական հաշվակշիռ-2012» ամենամյա զեկուցագրում:**

**Փաստաթղթում նշվում է, որ Սիրիայի հակամարտությունը համաշխարհային անվտանգության գլխավոր խնդիրներից մեկն է: Նույնպիսի խնդիր է Չինաստանի եւ ասիական այլ երկրների հարաճուն ռազմական զորությունը:**



**Ընդգծվում է, որ չնայած սիրիացի ապստամբերի որոշ առավելությանը, կառավարական ուժերը կարող են մարտավարական առումով գերազանցել ընդդիմադիր կազմավորումներին, եթե վերջիններս հրաժարվեն պարտիզանական պատերազմից եւ փորձեն մշտական վերահսկողության տակ առնել երկրի մեծ քաղաքները:**

**Փորձագետները ընդդիմության հաղթանակին խանգարող մեկ ուրիշ գործոն են համարում նրա քաղաքական ու ռազմական ուժեղ ղեկավարության բացակայությունը:**

**Ինչ վերաբերում է վերջին իրադարձություններին, Դամասկոսում պատրաստվում են ընդդիմության հետ բանակցելու եւս մեկ փորձ կատարել: Սպասվում է, որ բանակցությունները տեղի կունենան Մոսկվայի եւ Վաշինգտոնի միջնորդությամբ, հաղորդում է «Ռոսիա-24» հեռուստաալիքը:**

**Սիրիայի արտգործնախարարությունը երեկ տարածել է հայտարարություն, որով Լիբանանի իշխանություններից պահանջում է վճռական միջոցներ ձեռնարկել ընդհանուր սահմանի շրջանում ահաբեկիչների գործունեությունը կասեցնելու համար: SANA գործակալության տարածած փաստաթղթում նշվում է, որ Սիրիայի զինված ուժերը դրսեւորել են զսպվածություն եւ չեն հարվածել զինված կազմավորումների լիբանանյան հենակետերին: Սակայն նման վիճակը «չի կարող անվերջ շարունակվել»:**

**Զեկուցագրում նաեւ արձանագրվում է, որ պատմության մեջ առաջին անգամ 2012 թվականին Ասիայի երկրների ընդհանուր ռազմական ծախսերը գերազանցել են եվրոպական պետությունների համանման ծախսերին:**

**Հետազոտողները հատկապես շեշտում են ՉԺՀ բանակի արդիականացման փաստը: 2012-ի սեպտեմբերին չինական ծովուժը ստացավ իր պատմության մեջ առաջին ավիակիրը:**

**Անդադար աճում է նաեւ ԿԺԴՀ-ի ռազմական զորությունը: Փորձագետների գնահատումների համաձայն, այդ երկիրն ունի աշխարհում երրորդ քիմիական զինանոցը: ԿԺԴՀ-ում պլուտոնիումի պաշարները, ըստ Ռոյթեր գործակալության, կարող են բավարար լինել 12 միջուկային մարտագլխիկների արտադրության համար:**

Պ. Ք.

ՎՐԱՍՏԱՆ

# Իվանիշվիլին շրջաններին կտա այնքան իշխանություն, «որքան կարողանան մարսել»



Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին պատրաստակամություն է հայտնել երկրի տարածաշրջաններին տրամադրել այնքան իշխանություն, «որքան կկարողանան մարսել»: Նման հայտարարությամբ նա հանդես է եկել շրջանային մամուլի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ, հաղորդում է Թրենդ գործակալությունը:

Վարչապետը խոստացել է նոր ղեկավարության շրջանային կառավարման ռազմավարության հիման վրա փոփոխություններ կատարել օրենսդրության մեջ:

Նա ավելացրել է, որ 2013-ին շրջանների զարգացման նպատակով կառավարությունը հատկացնում է 200 մլն լարի (մոտ 120 մլն դոլար): Մասնավորապես կկառուցվեն ճանապարհներ եւ կամուրջներ: Իվանիշվիլին նաեւ խոստացել է շրջաններում արտոնյալ վարկերի հատկացում կազմակերպել փոքր եւ միջակ բիզնեսի ստեղծման համար:

Փետրվարի վերջերին Վրաստանի նոր ղեկավարությունը ներկայացրել էր տեղական ինքնակառավարման բարելավման ծրագիր, որով նախատեսվում է անցնել քաղաքապետների ուղղակի ընտրությունների: Ներկայումս նման ընտրություններ անցկացվում են միայն Թբիլիսիում:

# «Ազատություն» եւ «Ազատ Եվրոպա» ռադիոկայանները խախտում են մարդու իրավունքները

Չեխիայի հելսինկյան կոմիտեն (ՉՀԿ) քննադատել է «Ազատություն» եւ «Ազատ Եվրոպա» ռադիոկայանները, նշելով, որ նրանք խախտում են իրենց իսկ դավանած մարդու իրավունքները: «Հայաստանցի Աննա Կարապետյանի եւ Խորվաթիայի բնակչուհի Սնեժանա Պելիվանի դատական գործերը պետք է կարճվեն խաղաղ որոշումներով: Օտարազգի աշխատակիցների հետ կնքված խտրական պայմանագրերը վարկաբեկում են ռադիոկայանների հեղինակությունը եւ անմիջապես պետք է փոփոխության ենթարկվեն», գրել է ՉՀԿ-ի ներկայացուցիչը ռադիոկայանների նախագահի նորընտիր ժամանակավոր պաշտոնակատար Քեյվին Քլոզին:

Երեք զավակների տեր Աննա Կարապետյանի հայցն ընդդեմ այդ ռադիոկայանների գտնվում է Չեխիայի Գերագույն դատարանում, մինչդեռ Պելիվանի հայցը առկախված է մարդու իրավունքների եվրոպական դատարանում: Երկու կանայք էլ մտադիր են հետագայում դիմել նաեւ Ժնեւում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին:

Ռադիոկայանների՝ 21 երկրներում 28 լեզուներով հեռասփռվող ծրագրերը ժողովրդավարական գաղափարներ, մարդու իրավունքների հավասար պաշտպանություն, վարչական քմահաճ վերաբերմունքներից պաշտպանվածություն եւ էլի բազմաթիվ իդեալական հասկացություններ են քարոզում, որոնցից զրկված են ռադիոկայանների հարյուրավոր օտարազգի աշխատակիցներ: Նրանց կարող են աշխատանքից ազատել առանց պատճառաբանության, առանց նախօրոք զգուշացնելու եւ առանց համապատասխան փոխհատուցման: Չեխ հնագույն թերթերից «Լիդովե նովինիի» փոխանցմամբ՝ «իրավունքներից զուրկ աբորիգեններ» լինելու նրանց կարգավիճակի լավագույն օրինակներն են Կարապետյանն ու Պելիվանը:

Հ. Ծ.

# Հռոմի պապի չկայացած «հարսնացուն»

Արգենտինայի 77-ամյա բնակչուհի Ամալյա Դամոնտեն պնդում է, թե Խորխե Մարիո Բերգոլիոն հոգեւորական եւ իր վերջո Հռոմի պապ է դարձել միայն այն պատճառով, որ վաղ պատանեկության տարիներին ինքը մերժել էր նրա ամուսնության առաջարկը: Այդ մասին հաղորդում է The Mirror կայքէջը:

Տարեց տիկնոջ խոսքերով, մանուկ հասակում ինքը եւ Խորխեն շատ ժամանակ են անցկացրել միասին, քանի որ իրենց ընտանիքները ապրում էին հարեւան տներում: 1948 կամ 1949 թվականին, երբ Խորխեն 12 տարեկան էր, նա Ամալիային գրել էր երկտող, որով խնդրել էր դառնալ իր կինը:

«Եթե ինձ մերժես, կդառնամ հոգեւորական, գրել էր նա: Եվ, ի բարեբախտություն նրա, ես ասացի՝ ոչ», վերհիշում է Ամալյա Դամոնտեն:

Նրա խոսքերով, իր ծնողներին դուր չէին գալիս Խորխեի վաղաժամ ամուսնության ծրագրերը, իսկ նրա ապագան թվում էր խիստ կասկածելի: Հեռուստաէկրանին տեսնելով Վատիկանում ընտրված նոր պապին՝ Ամալյան զարմանքից քարացել էր: «Ես չէի կարողանում հավատալ, որ Խորխեն դարձել է պապ:» Նա լավ մարդ է, մեծացել է հասարակ բանվորական ընտանիքում: Հուսով եմ՝ նա կկարողանա իրագործել իր բոլոր մտահղացումները», ասել է Դամոնտեն:

# Մադոննան՝ Շերի կերպարով

Նկարիչ Չարլզ Կարո Թագուցյանը 89 տարեկան է, բայց «Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթի մարտի 2-ի համարի փոխանցմամբ, չափազանց ակտիվ է ու լի ստեղծագործական ավյունով եւ նորարար մտածողությամբ: Նրա վերջին կտավներից մեկը վերնագրված է «Մադոննան» եւ մանուկ Հիսուսը», որտեղ Աստվածածնի կերպարը ներկայացված է հայտնի երգչուհի եւ դերասանուհի Շերի դիմագծերով:



«Երբ առաջին անգամ Շերի նկարը տեսա մի ամսաթերթի շապիկին, զգացի որ նմանություն կա նրա եւ Մադոննայի դիմագծերում: Ի վերջո ո՞վ կարող էճշգրիտ նկարագրել իրական Մադոննայի դիմագծերը», բացատրել է նա հարցուփորձ անողներին:

Թագուցյանը լավատես է եւ գեղեցիկ նրբերանգներ է տեսնում գրեթե ամեն ինչում: Նույնիսկ ամենատխուր իրադարձությունները իր կտավներում դրական լիցքեր են հաղորդում շնորհիվ իր ուրույն վրձնահատվածների:

Շերի դիմագծերով Մադոննայի կտավը արվեստագետը նվիրել է այն հիվանդանոցին, որտեղ չորս տարի առաջ իրեն բուժել են աջ քներակային արտերիայի 85 տոկոսանոց խցանումից:

Թագուցյանը սկսել է նկարել տասը տարեկանից: Կտավներից բացի, նկարում է նաեւ ապակու վրա եւ քանդակում: Չորս երեխաներից ամենամեծն է եղել: Հայրն եւ հորեղբայրը Եղեռնից մազապուրծների թվում են եղել: Պապը սպանվել է թուրք զինվորի կողմից, իսկ տատը մահացել է Դեր-Զորի ճանապարհին: Նյու Յորքում բնակություն հաստատելուց հետո հաճախել է Մանհեթենի ավիա-առեւտրային ավագ դպրոցը, որտեղ սովորել է ինքնաթիռներ վերանորոգել:

Համաշխարհային երկրորդ պատերազմի օրերին ծառայել է «B-24 Liberator» տիպի ինքնաթիռների վրա որպես հրետաձիգ:

Զորացրվելուց հետո «Պրատ» ինստիտուտում հետեւել է արվեստի եւ դիզայնի դասընթացներին, որից հետո ուսումը շարունակել Գլենդեյլի արվեստի համայնքային քոլեջում: 1982-ին կնոջ՝ Լուիզի հետ տեղափոխվել է Արիզոնա: Ունի երեք զավակ. Ջեֆրին, որ ուղղ է նվագում, Ռոբերտը, որ կլարինետ է նվագում, եւ Սյուզանը, որ դաշնակահարուհի է: Երկու թոռներն էլ կիթառ են պարապում:

«Մոտ 90 տարի ապրելն անգամ մեծագույն նվաճում է», պնդում է նա:

Երկար եւ բեղմնավոր տարիներ մաղթենք մեզ համար նոր բացահայտված ամերիկահայ այս նկարչին:

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

# Բրիտանական ֆիլմեր Մանկավարժական համալսարանում

**«Մարդասպանների ընտանիքը» ֆիլմի ցուցադրությամբ Մանկավարժական համալսարանում այսօր մեկնարկեց Բրիտանական ֆիլմերի 11-րդ փառատոնը:**

**Այդ առթիվ բուհում հյուրընկալվել էր Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպան Ջոնաթան Էյվսը, դեսպանատան բարձրաստիճան աշխատակիցներ:**

**Հյուրերին ողջունեց բուհի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը: Վերջինս կարեւորեց Մանկավարժականում փառատոնի մեկնարկը՝ նշելով, որ բուհում պատրաստվում են ոչ միայն մանկավարժներ, այլեւ հեռուստատեսության, ռադիոյի, կինոյի եւ այլ բնագավառի մասնագետներ: Ռեկտորն ընդգծեց նաեւ, որ բուհում մեծ ուշադրություն է դարձվում օտար լեզուների՝ հատկապես անգլերենի մասնագետներ պատրաստելուն, որը շրջանավարտներին հնարավորություն կտա առավել հեշտությամբ ընդգրկվել եվրոպական ակադեմիաներում:**

**Ռուբեն Միրզախանյանը Ջոնաթան Էյվսին շնորհեց Մանկավարժական համալսարանի 90-ամյակը խորհրդանշող հոբելյանական մեդալ:**

**Մեծ Բրիտանիայի դեսպանը մեծ պատիվ համարեց մեդալին արժանանալը՝ նշելով. «Մենք բարձր ենք գնահատում, որ Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկը իր ցանկությունն է հայտնել բրիտանական ֆիլմեր ցուցադրել բուհում»:**

**Դեսպանի կարծիքով, այս ցուցադրությունը կամրապնդի երկու երկրների միջեւ մշակութային կապը՝ դառնալով առավել ամուր համագործակցության սկիզբ:**

**Հայաստանում պաշտոնավարելու ընթացքում Ջոնաթան Էյվսը նկատել է՝ կան բազմաթիվ տաղանդավոր երիտասարդներ, որոնք, տեսնելով այս ֆիլմերը, նոր կապեր կհաստատեն բրիտանացի մասնագետների հետ եւ կկարողանան մինչեւ վերջ օգտագործել իրենց ներուժը:**

**Նշենք, որ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան 2013 թվականը հռչակել է Միջազգային ջրային համագործակցության տարի: Բրիտանական ֆիլմերի փառատոնը միացել է այս նախաձեռնությանը՝ բրիտանական ֆիլմերի կինոդիտումներ կազմակերպելով նախ մարզերում, ապա նաեւ զորամասերում:**

# Նյու Յորքում ցուցադրվել է «Չբացահայտված Օձուն» ֆիլմաշարը

**Նյու-Յորքի Արվեստի եւ մշակույթի համալսարանի դահլիճում տեղի է ունեցել վերջերս «Ազգային կինո» մրցանակին արժանացած «Չբացահայտված Օձուն» ֆիլմաշարի ցուցադրությունը:**

**Վաղ միջնադարյան հայկական ճարտարապետության մեծագույն մարգարիտներից մեկի՝ Օձունի վանքի մասին ֆիլմաշարի դիտմանն էին մասնակցում պատվավոր հյուրեր, հայկական համայնքի ներկայացուցիչներ, ինչպես նաեւ ԱՄՆ Արեւելյան ափի տարբեր համալսարաններում սովորող հայ երիտասարդներ: Տեսաուղերձի միջոցով իր օրհնությունը հանդիսատեսին փոխանցեց Օձունի հոգեւոր հովիվ Տեր Վրթանես քահանա Բաղալյանը:**

**Ցուցադրության մասնակիցները բարձր գնահատեցին ֆիլմաշարի գեղարվեստական արժեքը, ինչպես նաեւ ողջունեցին ռուսաստանաբնակ, ծնունդով օձնեցի գործարար Մ. Զավարյանի նախաձեռնությամբ եւ ֆինանսական աջակցությամբ իրականացվող Օձունի վանքի (VIդ.) վերականգնման ծրագիրը, որին միացել են տասնյակ բարերարներ:**

**Ֆիլմաշարը առաջիկա շաբաթների ընթացքում կցուցադրվի նաեւ Կալիֆորնիա նահանգի Լոս Անջելեսի դահլիճներից մեկում՝ «Հայրենիք» հայրենակցական խորհրդի աջակցությամբ:**

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

**Ֆիլմաշարի մասերից մեկը կարելի է դիտել հետեւյալ հղումով.**

**http://www.youtube.com/watch?v=L-eC66ajPU8**

# Սար Սարգսյանի «Կարոս» ձայնասկավառակի շնորհանդեսը

**Մարտի 19-ին, ժամը 18.30-ին Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի համերգասրահում տեղի կունենա արցախցի երգիչ Սար Սարգսյանի «Կարոս» ձայնասկավառակի շնորհանդեսը:**

**«Կարոս»-ը երգչի առաջին ձայնասկավառակն է: Թողարկվել է Մոսկվայում՝ «Դի Վի Դի Կլուբ» ընկերությունում: Երգերը ձայնագրվել են Երեւանում՝ «Մի-Պրոդաքշն» ստուդիայում, ձայնագրման ռեժիսոր եւ համադրող՝ Միխայել Մարգարյան: Երգերի գործիքավորումը՝ Ալյա Մաղաքյանի եւ Արմեն Սարգսյանի: Դիզայնը՝ Զորիկ Գրիգորյանի, ֆոտոն՝ Տաթեւ Հակոբյանի, տպագրությունը՝ «Անտարես» մեդիա հոլդինգի:**

**Ձայնասկավառակում տեղ են գտել հայ մեծանուն կոմպոզիտորների (Ռ. Մելիքյան, Է. Աբրահամյան, Ա. Բաբաջանյան, Ռ. Պետրոսյան, Վ. Կոտոյան, Ա. Սաթյան, Գ. Արմենյան, Ա. Հեքիմյան, Կ. Օրբելյան, Գ. Չթչյան եւ Ռ. Ամիրխանյան) 12 ստեղծագործություններ՝ ռոմանսներ եւ երգեր, որոնք ներկայացվում են ժամանակակից գործիքավորմամբ եւ երգչի յուրօրինակ նոր մեկնաբանությամբ:**

**Ձայնասկավառակի շնորհանդեսներ կկազմակերպվեն նաեւ Ստեփանակերտում, Թբիլիսիում, Մոսկվայում եւ Սանկտ-Պետերբուրգում:**

ԻՍՊԱՆԻԱ

# Երբ մեկտեղվում են աշխարհի մշակույթները

Երբ աշխարհում գոյություն ունեցող սահմաններն ընկալվում են գեթ զանազան մշակույթները տարանջատող բնագծեր, ակամայից պատկերացնում ես, թե որքա՜ն հարուստ է Երկիր մոլորակը, որի ուղեծրով կողք-կողքի եւ համաչափ պտտվում են նույն այդ մշակույթները՝ առանց իրար խանգարելու եւ մեկը մյուսին լրացնելով: Միայն այս դեպքում է, որ համակեցությունը դառնում է անխուսափելի անհրաժեշտություն, որից եւ ծնվում է այդքան բաղձալի խաղաղությունը: Թերեւս այս վերջինն անհնարին լինի ձեռք բերել ամբողջ աշխարհում (համենայն դեպս, դեռ ոչ ոքի դա չի հաջողվել), քանզի եթե չեն բախվում գաղափարախոսությունները, ապա դա անում են կրոնները, եւ եթե չեն բախվում մշակույթները, ապա դա անում են սովորույթները:

Գունեղ ու բազմերանգ մշակութային խճանկարը, որը զարմանալիորեն եւ հաճելիորեն համատեղվում է այս փոքրիկ քաղաքում՝ Միսլատայում, ուր 115 ազգի ներկայացուցիչներ են ապրում կողք-կողքի:

Եվ որքան էլ զարմանալի կամ անհավատալի թվա՝ այստեղ բնակվող օտարազգիներին միավորողը... հայն է: Դասավանդողն այս տողերի հեղինակն է, ով բացի ուսուցանելուց նաեւ ուսանում է: Եվ, հավատացեք, մեծագույն բավականություն եմ ստանում, երբ հաջողվում է հանդուրժողականություն սերմանել կրոնների ու գաղափարախոսությունների միջեւ, որոնք լեզվի ուսուցման միջոցով սկսում է հետաքրքրել բոլորին, պակիստանցուն՝ հնդիկի մտահոգությունը, թուրքին՝ հայի պահանջը, հրեային՝ պաղեստինցու խնդիրը: Հավատացեք,



Իսկ ահա այս փոքրիկ լսարանում ամեն ինչ հնարավոր է, եւ պետք է մեներգմիշտ ընդունել, որ հենց նման փոքրիկ լսարաններից է սկսվում ամեն ինչ՝ սերը կամ ատելությունը, խաղաղությունը կամ պատերազմը, հանդուրժողականությունը կամ վանումը:

Այս փոքրիկ լսարանում հնարավոր է մեկտեղել բոլոր մշակույթները, կրոնները, գաղափարախոսություններն ու սովորույթները: Այստեղ հնարավոր է գտնել համակեցության բանաձեւը եւ հաստատել խաղաղություն: Իսկ բանաձեւը միակն է՝ լսել եւ ճանաչել: Դրա համար ընդամենը պետք է մեկ բան՝ համագործակցություն: Իսկ ահա վերջինիս ամենաանհրաժեշտ պայմանը լեզուն է, այս դեպքում՝ իսպաներեն լեզուն:

Այս երգեցիկ լեզուն սովորելու անհրաժեշտությունը կողք-կողքի է նստեցրել հրեային ու պաղեստինցուն, հնդիկին ու պակիստանցուն, թուրքին ու քրդին, ռուսին ու լեհին, պարսիկին ու իրաքցուն... Եվ այդպես, ցայսօր 48 ազգի ներկայացուցիչներ, մոռանալով բոլոր քաղաքական տարաձայնությունները, կրոնական ու ազգային տարբերությունները, միավորվել են մեկ նվիրական գաղափարի շուրջ՝ սովորել այն հյուրընկալ երկրի լեզուն, որն այդքան ջերմորեն իր դռներն է բացել իրենց առջեւ:

Լեզուն սովորելով հանդերձ, կամա թե ակամա, նրանք բոլորն էլ ի ցույց են դնում իրենց տարբերությունները, սակայն ո՛չ թե եսասիրության ու ազգայնամոլության հարթակից, այլեւ՝ ծանուցելու նպատակով: Եվ տեսնելուց, լսելուց ու ըմբռնելուց հետո հասկանում ես, որ կողքինիդ տարբերությունը միմիայն հարստացնում է քեզ: Հենց այդ տարբերություններն են, որ ստեղծում են այն գեղեցիկ, այս ամենի պատասխանները գտնում ենք այս փոքրիկ լսարանում՝ Միսլատայի Գաղթականների ինտեգրման եւ միջնորդության կենտրոնում (AMICS), ուր նույնիսկ տարիքը սահմանափակում չունի: Այստեղ տեղ ունեն բոլորը՝ թ՛ե 84-ամյա ղազախուհի Կլավդիա Պոտուշենկոն, թ՛ե 15-ամյա հնդկուհի Մրկիտ Կոտը: Նայելով նրանց՝ հասկանում ես, որ բոլոր խնդիրներն ունեն իրենց պատասխանները, եւ դրանք կարելի է հայտնաբերել խաղաղորեն:

Արարատ հայկական միությունը, համագործակցությամբ Միսլատայի քաղաքապետարանի, այս էլ արդեն 6-րդ տարին է, ինչ իսպաներենի անվճար դասընթացներ է անցկացնում օտարերկրացիների համար: Վերջին կուրսի շրջանավարտները լրացրեցին մոտ 700 աշակերտների շարքը, որոնք ժամանակին այցելել են դասընթացներին: Պատվոգրերը հանձնելու համար քաղաքապետարանից ժամանել էին Միջազգային Համագործակցության խորհրդական Խոսե Ռամոն Բոսկան (Josռ Ramgn Boscn), Ձախ Միության խոսնակ Սալվադոր Գարսիա Մոտան (Salvador Garcվa Mota) եւ Ժողովրդական կուսակցության խորհրդականներ Լիխիա Ռոդրիգոն (Liqia Rodrigo) ու Խուլիո Բալբաստրեն (Julio Balbastre): Հանձնման արարողության վերջում խոսք առավ Խոսե Ռամոն Բոսկան, ով բարձր գնահատեց «Արարատ» միության ծավալած գործունեությունը ո՛չ միայն քաղաքում, այլ նաեւ մարզում եւ ամբողջ երկրում:

Ինչպես միշտ, այս անգամ եւս պատվոգրերի հանձնման արարողությանը հաջորդեց փոքրիկ ճաշկերույթը, որին բոլոր ազգերը ներկայացրեցին իրենց ազգային ուտեստները:

ԱՐԱՐԱՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ
Վալենսիա (Իսպանիա)

# Երիտասարդական հավաքականը սկսում է նախապատրաստությունը Եվրոպայի առաջնության

Ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հավաքականը սկսում է նախապատրաստությունը 2015-ի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարին: Ինչպես հայտնի է, մեր ընտրանին ընդգրկված է ընտրական 10-րդ խմբում, որտեղ մրցելու է Ֆրանսիայի, Բելառուսի, Իսլանդիայի եւ Ղազախստանի հավաքականների հետ: Առաջին հանդիպումը մեր ֆուտբոլիստները կանցկացնեն հունիսի 6-ին՝ Երեւանում հյուրընկալելով Իսլանդիայի հավաքականին:

Երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչ Ռաֆայել Նազարյանը մարտի 18-21-ը կայանալիք ուսումնամարզական առաջին հավաքին հրավիրել է 25 ֆուտբոլիստի: Քանի որ երիտասարդական հավաքականում կարող են հանդես գալ մինչեւ 21 տարեկան ֆուտբոլիստներ, ուստի ընտրական նախորդ մրցաշարի համեմատ կազմում զգալի են փոփոխությունները: Փաստորեն Ռաֆայել Նազարյանին հարկ կլինի նոր հավաքական ձեւավորել:

Հավաքի հրավիրված ֆուտբոլիստների մեծամասնությունը Հայաստանի ակումբներում են հանդես գալիս: Նրանցից 10-ը ներկայացնում են «Փյունիկը»: Հրավիրվել են նաեւ 3 լեգեոնականներ: Եթե Մոսկվայի սպարտակցի Աղվան Պապիկյանն արդեն հանդես է եկել երիտասարդական հավաքականում, ապա «Անժիի» երիտասարդական կազմում հանդես եկող Յուրի Ուդունյանն ու գերմանական «Հանզայի» ֆուտբոլիստ Սարգիս Ադամյանն առաջին անգամ են հրավիրվում հավաքական:


ՖՈՏՈԼՈՒՐ

Մարտի 18-ին եւ 19-ին երիտասարդական հավաքականն Ավանի ակադեմիայի խաղադաշտում 2-ական մարզում կանցկացնի: Եվս մեկ պարապմունք կանցկացվի մարտի 20-ին: Ուսումնամարզական հավաքը կեզրափակվի մարտի 21-ին «Հանրապետական» մարզադաշտում Հայաստանի ազգային հավաքականի հետ ընկերական մրցախաղով:

Ահա թե ովքեր են հրավիրվել երիտասարդական հավաքական:

Դարպասապահներ՝ Գոռ Մանուկյան («Փյունիկ»), Արսեն Բեգլարյան («Գանձասար»), Արթուր Թորոյան («Բանանց»), պաշտպաններ՝ Վասպուրակ Մինասյան («Փյունիկ»), Արման Հովհաննիսյան («Փյունիկ»), Յուրի Ուդունյան («Անժի», Ռուսաստան), Տարոն Ոսկանյան («Փյունիկ»), Եղիշե Վարդանյան («Իմպուլս»), Գրիգոր Հովհաննիսյան («Փյունիկ»), Ալեն Համբարձումյան («Գանձասար»), Դավիթ Ջաքարյան («Փյունիկ»), կիսապաշտպաններ՝ Աղվան Պապիկյան («Սպարտակ», Մոսկվա, Ռուսաստան), Վահե Միրաքյան («Իմպուլս»), Նարեկ Գյոզալյան («Բանանց»), Նաիրի Մինասյան («Բանանց»), Գագիկ Պողոսյան («Փյունիկ»), Կարեն Հարությունյան («Բանանց»), Անդրանիկ Քոչարյան («Բանանց»), Վահագն Այվազյան («Իմպուլս»), Սարգիս Շահինյան («Միկա»), Աշոտ Սարդարյան («Փյունիկ»), Վարդան Բակալյան («Փյունիկ»), հարձակվողներ՝ Սարգիս Բալոյան («Փյունիկ»), Դավիթ Հակոբյան («Շիրակ»), Սարգիս Ադամյան («Հանզա», Ռոստոկ, Գերմանիա):

# Անգլիական ակումբների բենեֆիսը

Հայտնի դարձան ֆուտբոլի Եվրոպայի լիգայի քառորդ եզրափակիչի բոլոր 8 մասնակիցները: Եթե չեմպիոնների լիգայից անգլիական ակումբները դուրս մնացին, ապա Եվրոպայի լիգայում հանդես եկող այդ երկրի 3 ներկայացուցիչներն էլ կշարունակեն պայքարը մրցանակի համար:



Չեմպիոնների գործող գավաթակիր Լոնդոնի «Չելսին» սեփական հարկի տակ 3-1 հաշվով ռեւանշի հասավ ռումինական «Ստյաուայից» կրած պարտության (0-1) դիմաց: Մեծ դժվարությամբ քառորդ եզրափակիչի ուղեգիր նվաճեց «Նյուքասլը»: Սեփական հարկի տակ հյուրընկալելով Մախաչկալայի «Անժիին», որի հետ առաջին խաղն ավարտվել էր գոլազուրկ ոչ-ոքի, անգլիացիները միակ գոլը խփեցին ավելացված ժամանակում: Աչքի ընկավ Սիսեն: Իսկ մինչ այդ «Անժիին» կարող էր հաղթանակ պարգեւել Սամուել Էտո՛Օ-ն, որը եվրոգավաթներում հոբելյանական՝ 100-րդ խաղն էր անցկացնում: Սակայն կամերունցի հարձակվողը վրիպեց նպաստավոր դիրքից:

Անգլիայի 3-րդ ներկայացուցիչ «Տոտենհեմն» էլ մեծ դժվարությամբ հաղթահարեց 1/8 եզրափակիչի արգելքը: Առաջին խաղում անգլիական ակումբը սեփական հարկի տակ 3-0 հաշվով հաղթել էր «Ինտերին» ու հաջորդ փուլի լուրջ հայտ էր ներկայացրել: Սակայն պատասխան խաղում իտալացիներին հաջողվեց 3 անպատասխան գնդակ ուղարկել մրցակցի դարպասը: Նշանակվեց լրացուցիչ ժամանակ, որում թիմերը մեկական գնդակ փոխանակեցին: Եվ շնորհիվ մրցակցի դաշտում Ադեբայորի խփած գոլի, «Տոտենհեմը» մտավ հաջորդ փուլ:

Ռուսաստանը ներկայացնող 3 ակումբներից միայն «Ռուբինը» կշարունակի պայքարը: «Ռուբինը» սեփական հարկի տակ 2-0 հաշվով հաղթեց իսպանական «Լեւանտեին», որի հետ առաջին հանդիպումում դարպասները մնացել էին անառիկ: Իսկ ահա «Զենիթի» ֆուտբոլիստներին չհաջողվեց սեփական հարկի տակ վերացնել առաջին խաղում «Բազելի» ունեցած 2 գնդակի առավելությունը: «Զենիթին» միայն մեկ անգամ հաջողվեց գրավել մրցակցի դարպասը, ինչը բավարար չէր հաջորդ փուլ մտնելու համար:

Պայքարը կշարունակի նաեւ «Բենֆիկան», որը հյուրընկալվելիս էլ հաղթեց «Բորդոյին» (3-2): Իտալիան Եվրոպայի լիգայում կներկայացնի «Լացիոն», որը 2-րդ անգամ հաղթեց «Շտուտգարտին» (3-1): Իսկ թուրքական «Ֆեներբահչեին» հաջորդ փուլի ուղեգիրն ապահովեց առաջին խաղում հյուրընկալվելիս չեխական «Վիկտորիայի» նկատմամբ տոնած հաղթանակը (1-0), քանի որ 2-րդ հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի՝ 1-1:

Շվեյցարական Նիոն քաղաքում կայացած վիճակահանությամբ հայտնի դարձան քառորդ եզրափակիչի զույգերը: Ապրիլի 4-ին կայանալիք առաջին հանդիպումներում կմրցեն հետեւյալ թիմերը:

**«Չելսի»-«Ռուբին»**
**«Տոտենհեմ»-«Բազել»**
**«Ֆեներբահչե»-«Լացիո»**
**«Բենֆիկա»-«Նյուքասլ»**

Պատասխան հանդիպումները տեղի կունենան ապրիլի 11-ին:

ՇԱԽՄԱՏ

# Արոնյանը Կառլսենի հետ ոչ-ոքիով սկսեց հավակնորդների մրցաշարը

Երեկ Լոնդոնում մեկնարկեց շախմատի աշխարհի չեմպիոնի տիտղոսի հավակնորդների մրցաշարը: Հաղթողի գլխավոր հավակնորդներ Լեւոն Արոնյանի եւ Մագնուս Կառլսենի մրցավեճը 31-րդ քայլին ավարտվեց ոչ-ոքի: Մեկնարկային տուրի մյուս 3 պարտիաներն էլ նույնպիսի արդյունքով ավարտվեցին: Հաշտություն կնքեցին նաեւ Պյոտր Սվիդլերն ու Վլադիմիր Կրամնիկը, Բորիս Գելֆանդն ու Թեյմուր Ռաջաբովը, Վասիլի Իվանչուկն ու Ալեքսանդր Գրիշչուկը:

Այսօր կայանալիք 2-րդ տուրում Լեւոն Արոնյանը սպիտակներով կխաղա Բորիս Գելֆանդի հետ: Կկայանան նաեւ Կառլսեն-Կրամնիկ, Գրիշչուկ-Սվիդլեր, Ռաջաբով-Իվանչուկ պարտիաները:

# Կարապետ Միքայելյանը ոտքի վիրահատության է ենթարկվել

Հայաստանի ազգային հավաքականի եւ Սամարայի «Կռիլյա Սովետովի» նախկին ֆուտբոլիստ Կարապետ Միքայելյանը ոտքի վիրահատության է ենթարկվել: 4 ժամ տեւած վիրահատությունը հաջող է անցել:

Վիրահատության համար անհրաժեշտ 935 հազար ռուբլի գումարը վճարելուն օգնել էին Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ռուբեն Հայրապետյանը, նախկին եւ ներկայիս ֆուտբոլիստներ Ալեքսանդր Ռյազանցեւը, Ալեքսանդր Բորոդյուկը, Սերգեյ Իգնաշեւիչը, Անտոն Շունինը, Վլադիմիր Գաբուլովն ու Իլյա Չեբանուն: Փետրվարի 25-ին Ռուսաստանի ֆուտբոլիստների եւ մարզիչների արհմիությունը դիմել էր երկրի պրոֆեսիոնալ բոլոր ֆուտբոլիստներին՝ ֆինանսական օգնություն ցույց տալու Միքայելյանին:

# Պավել Բալայը Հայաստան-Չեխիա հանդիպման մրցավարն է

Մարտի 26-ին «Հանրապետական» մարզադաշտում կայանալիք Հայաստան-Չեխիա հանդիպումը կսպասարկի Ռումինիայի մրցավարական բրիգադը 41-ամյա Պավել Բալայի գլխավորությամբ:

Ռումինացի մրցավարը 2-րդ անգամ է ժամանելու Հայաստան: 2007-ին նա «Հանրապետականում» սպասարկել է Լեհաստանի հավաքականի հետ ընտրական մրցախաղը, որում հայ ֆուտբոլիստները հաղթել էին Համլետ Մխիթարյանի խփած միակ գոլի շնորհիվ:

# Ըմբիշները կմեկնեն Թբիլիսի

Հայաստանի ազատ ոճի ըմբշամարտի հավաքականն այսօր կմեկնի Թբիլիսի՝ մասնակցելու մարտի 19-22-ը կայանալիք Եվրոպայի առաջնությանը: Հավաքականի գլխավոր մարզիչ Արայիկ Բաղդադյանը թիմում ընդգրկել է Միհրան Ջաբուրյանին (55 կգ), Արթուր Առաքելյանին (60 կգ), Դավիթ Սաֆարյանին (66 կգ), Գրիգոր Գրիգորյանին (74 կգ), Մուսա Մուրթազալիեւին (84 կգ), Էդգար Ենոքյանին (96 կգ) եւ Անդրանիկ Գալստյանին (120 կգ):

# Վիճակահանությունն անվանեց մրցակիցներին

Երեկ շվեյցարական Նիոն քաղաքում կայացավ ֆուտբոլի չեմպիոնների լիգայի քառորդ եզրափակիչի մասնակիցների վիճակահանությունը: Ապրիլի 2-3-ին կայանալիք քառորդ եզրափակիչ առաջին հանդիպումներում կմրցեն հետեւյալ զույգերը. ՊՍԺ-«Բարսելոնա», «Ռեալ»-«Գալաթասարայ», «Մալագա»-«Բորուսիա», «Բավարիա»-«Յուվենտուս»: Պատասխան հանդիպումները կկայանան ապրիլի 9-ին եւ 10-ին:

# Կրկին ոչ-ոքի

Մինսկում ուսումնամարզական հավաք անցկացնող «Ուրարտուն» ստուգողական 2-րդն խաղն էլ ավարտեց ոչ-ոքի՝ 2-2: Մրցակիցը Բելառուսի առաջին խմբի նորեկ «Սլոնիմին» էր: «Ուրարտուից» գոլերի հեղինակներ են դարձել Արմեն Պապյանն ու Միքայել Պողոսյանը:

# Դեւիդ Բեքհեմն աշխարհի ամենահարուստ ֆուտբոլիստն է




Ֆրանսիական ՊՍԺ-ի անգլիացի կիսապաշտպան Դեւիդ Բեքհեմն աշխարհի ամենահարուստ ֆուտբոլիստն է: Անգլիայի հավաքականի նախկին ավագի կարողությունը կազմում է 261 մլն դոլար: 2-րդ տեղում իսպանական «Բարսելոնի» եւ Արգենտինայի հավաքականի հարձակվող Լիոնել Մեսին է, որի կարողությունը գնահատվում է 172 մլն դոլար:

Ամենահարուստ ֆուտբոլիստների տասնյակում տեղ են զբաղեցրել նաեւ Քրիստիանու Ռոնալդուն՝ 167 մլն, Կական՝ 99 մլն, Ռոնալդինյոն՝ 94 մլն, Սամուել Էտո՛Օ-ն՝ 78 մլն, Ուեյն Ռունին՝ 74,5 մլն, Զլատան Իբրահիմովիչը՝ 70 մլն, Ռիվալդոն՝ 68 մլն եւ Ռիո Ֆերդինանդը՝ 63 մլն:

# Բլատերը դեմ է Պլատինիի գաղափարին

ՖԻՖԱ-ի նախագահ Զեպ Բլատերը դեմ է ֆուտբոլի Եվրոպայի 2020-ի առաջնությունը 13 երկրներում անցկացնելու գաղափարին: Ըստ Բլատերի, Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլի հանդիպումները պետք է անցկացվեն մեկ երկրում, այլապես մրցաշարը կկորցնի իր սիրտն ու ոգին:

Հիշեցնենք, որ 2020-ի Եվրոպայի առաջնությունը տարբեր երկրների քաղաքներում անցկացնելու գաղափարն ՈՒԵՖԱ-ի նախագահ Միշել Պլատինիինն է: Մրցաշարի եզրափակիչ փուլում հանդես են գալու 24 հավաքականներ:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՀԱՆՐԱՀԱՎԱՔ

# Միայն երկու...

*1-ին էջից*

**Ապա խստացավ, թե եթե հաղորդագրության միջոցով իրեն սադրում են, որ հայ քրիստոնյային չեն ուզում թաղել Հայ առաքելական եկեղեցու մեջ, ապա՝ «ինձ թաղեք իմ հայրենիքի ցանկացած անկյունում, որի ամեն կտորը վեհ է ինձ համար»: Ու խորհուրդ տվեց Վեհամոր Ավետարանը չմտցնել քաղաքական պայքարի մեջ՝ հիշեցնելով, որ պետությունն ու եկեղեցին անջատ են:**

**Խիստ խոսքեր բաժին հասան նաեւ ԵԺԿ նախագահ Վիլֆրիդ Մարթենսին, որը «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում դժգոհել էր ընտրությունների վերաբերյալ «Ժառանգության» ուղարկած նամակային մեղադրանքներից՝ նշելով, որ Սերժ Սարգսյանն ընտրվել է ձայների մեծամասնությամբ. «Եթե սա է Եվրոպան՝ մեզ բնավ պետք չէ», ասաց Րաֆֆին Մարթենսին՝ հակադարձելով Մարթենսի ասածին, թե Րաֆֆին պատրանքի մեջ է. հենց ինքը, Մարթենսն է պատրանքի մեջ, «Արեւմուտքի քաղաքակրթությունը սկսվել է Հայաստանից, եւ թող դասեր չտան Հայաստանին»:**

**Այլեւս այլ ծրագրեր չբացահայտվեցին. այսօր Ազատության հրապարակում ռոք-համերգ է, կիրակի օրը ժամը 17-ից հրապարակում ընթացք է ստանում «Քաղաքացիական խորհուրդ» նախաձեռնությունը, որը միտինգանման քննարկումների շարք է՝ նոր, րաֆֆիական դատական, օրենսդիր, գործադիր իշխանությունների ձեւավորմանն ընդառաջ, ու առաջին բանախոսն էլ Նիկոլ Փաշինյանն է լինելու, դա կձգվի ամեն օր, մինչեւ եկող հինգշաբթի, իսկ ահա ուրբաթ նորից հանրահավաք կլինի:**

**Հանրահավաքը վարող Արմեն Մարտիրոսյանը մեկ անգամ էլ շեշտեց, որ եթե Սերժ Սարգսյանը սկսի երկխոսություն՝ Րաֆֆի Հովհաննիսյանը պատրաստ է դրան, ճիշտ է, չֆիքսեցինք, թե դա ի՞նչ համատեքստում ասվեց:**

**Իսկ Նիկոլ Փաշինյանն իր խոսքում ահա թե ինչ ուրվագծեր էր արել. կոմպրոմիս ժողովրդի եւ իշխանության միջեւ կարող է լինել միայն իշխանությունը փոխանցելու վերաբերյալ, ժողովուրդը չի դիմադրելու, բայց չի էլ նահանջելու: Պետք է հրապարակում սկսել քննարկումների շարք՝ նոր կառավարության եւ նոր իշխանության ձեւավորման վերաբերյալ (փաստորեն Րաֆֆի Հովհաննիսյանն այդ առաջարկն իրագործում է): Իսկ գործողությունների գագաթնակետը ապրիլի 9-ին է, որը պետք է անիմաստ դարձնի Սերժ Սարգսյանի ապրիլի 9-ի երդմնակալությունը մարզահամերգային համալիրում, քանի որ Հանրապետության հրապարակում պետք է միլիոնանոց հանրահավաք լինի: Նիկոլի գաղափարն է նաեւ, որ պետք է այդ օրը Հանրապետության հրապարակ հրավիրել Շառլ Ազնավուրին, Սերժ Թանգյանին, Քըրք Քըրքորյանին՝ միանալու ժողովրդին:**

**Արմեն Մարտիրոսյանը նաեւ հայտարարեց Ազատության հրապարակում սկսված ստորագրահավաքի մասին, որ տեւելու է դեռ մի քանի օր: Մարդիկ հերթ էին կանգնել՝ ստորագրելու, որ ընտրել են Ր. Հովհաննիսյանին եւ մասնակցելու են Հանրապետության հրապարակի ապրիլի 9-ի հանրահավաքին:**

**Իսկ ահա Անահիտ Բախշյանը հայտարարեց, որ ստեղծվում է «Բարեւ» հիմնադրամ, որտեղ իրենց համակիրները կարող են ներդրումներ անել շարժման կարիքները հոգալու համար:**

**Մ. Խ.**

**Հ. Գ. Մոռացանք նշել, որ ոստիկանները բավական բարեկիրթ եւ փաղաքշաբար էին վերաբերվում հանրահավաքավորներին:**

**«Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով բուհերի, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների և դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար անցկացվող «Երևանը համայն հայության մայրաքաղաքն է» թեմայով լավագույն գրական ստեղծագործության IX միջազգային մրցույթի**

# ԿԱՐԳ

## 1. Ընդհանուր դրույթներ

Ներկա դրույթները սահմանում են «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով բուհերի, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների և դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար անցկացվող IX միջազգային մրցույթի նպատակն ու խնդիրները, ինչպես նաև նրա անցկացման կարգը

Մրցույթի թեման է **«Երևանը համայն հայության մայրաքաղաքն է»:** Մրցույթն անց է կացվում «Ռուսաստանի հայերի միություն» համառուսաստանյան հասարակական կազմակերպության, «Համաշխարհային հայկական կոնգրես» հայկական հասարակական կազմակերպությունների միջազգային միության, ՀՀ սփյուռքի նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից:

Մրցույթն անցկացվում է 2013 թվականի **մարտի 15-ից մինչև հունիսի 15-ը**

Մրցույթի արդյունքները կամփոփվեն և կհրապարակվեն 2013թ. սեպտեմբերին, իսկ հաղթողների պարգևատրման հանդիսավոր արարողությունը կկայանա հոկտեմբերին:

## 2. Մրցույթի նպատակը

Մրցույթի նպատակն է Հայաստանի, Արցախի և հայկական սփյուռքի սովորող երիտասարդությանն ավելի մոտիկից հաղորդակից դարձնել հայոց մայրաքաղաքի՝ Երևանի հինավուրց ու նոր պատմությանը, զարգացման հեռանկարներին, Հայաստան – Սփյուռք գործակցության ամրապնդման, աշխարհով մեկ սփռված հայությանը համազգային շահերի շուրջ համախմբման գործընթացներում քաղաքամայր Երևանի նոր դերակատարմանը:

Ցանկալի է, որպեսզի մրցույթի մասնակիցներն իրենց աշխատանքներում անդրադառնան Երևանի, որպես աշխարհի հնագույն քաղաքներից մեկի պատմությանը, ներկայացնեն նոր Երևանի վերաբերյալ իրենց տեսլականը ոչ միայն որպես անկախ Հայաստանի քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոն, այլև դիտարկեն այն որպես յուրաքանչյուր հայի սրտում միակ հայրենիքի, մայր հողի մարմնացման խորհրդանիշ:

Սփյուռքում ծնված ու մեծացած երիտասարդներն իրենց աշխատանքներում պետք է գործնականորեն ցույց տան այն դերը, որն այսօր խաղում է Երևանը նրանց ազգային ինքնագիտակցության զարթոնքի գործում:

Մրցութային աշխատանքը պետք է արտացոլի յուրաքանչյուր մասնակցի, անկախ բնակության վայրից, պատկերացումները նոր Երևանի կերտման գործում իր դերակատարման վերաբերյալ, ինչպես նաև անձնական խոհերն ու հույզերը նրա ապագայի մասին: Պետք է հստակ ցույց տալ, թե ինչպիսին կարող է լինել հայ երիտասարդության ներդրումը Հայաստանի հզորացման, տնտեսական և մշակութային ներուժի ամրապնդման գործում:

## 3. Մրցույթի մասնակիցները

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և հայկական սփյուռքի բուհերի, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողներն ու դպրոցների բարձր դասարանի աշակերտները: Մրցույթին կարող են մասնակցել նաև այլազգի սովորող երիտասարդության ներկայացուցիչներ

### Մրցույթի պայմանները

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի մրցույթին մասնակցել մեկ ստեղծագործությամբ, որը կարող է լինել ինչպես չափածո, այնպես էլ արձակ ստեղծագործություն (բանաստեղծություն, պատմվածք և այլն):

Մրցույթին մասնակցելու իրավունք են ստանում թեմային և նշված ծավալին համապատասխանող աշխատանքները Վերոնշյալ պահանջներին չհամապատասխանող գործերը ենթակա չեն քննարկման:

## 4. Մրցույթի կազմակերպման կարգը

Մրցույթը ղեկավարելու նպատակով ստեղծվում է Կազմկոմիտե, որը որոշում է մրցույթի անցկացման ժամկետները, կարգը, ձևավորում մրցութային հանձնաժողով և ամփոփում մրցույթի արդյունքները

Մրցութային հանձնաժողովը

❖ մշակում է աշխատանքների գնահատման չափանիշները

❖ ստուգում և գնահատում է աշխատանքները

❖ սահմանում է մրցանակային տեղերը և անվանակարգերը

❖ որոշում է մրցույթի հաղթողներին և ցուցակը ներկայացնում Կազմկոմիտեի քննարկմանը

Մրցույթի Կազմկոմիտեին իրավունք է վերապահվում անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխություններ կատարել մրցույթի անցկացման կարգում

Մրցույթի արդյունքներն ուսանողների և աշակերտների համար կամփոփվեն առանձին-առանձին, յուրաքանչյուրին հատկացնելով երեքական տեղ:

## 5. Հաղթողների պարգևատրումը

Մրցույթում առաջին երեք տեղերը շահած թ՛ե ուսանողները և թ՛ե աշակերտները կպարգևատրվեն «Notebook» համակարգիչներով և դիպլոմներով, իսկ առանձին անվանակարգերում հաղթողները՝ արժեքավոր նվերներով և պատվոգրերով

## 6. Մրցութային աշխատանքին ներկայացվող պահանջները

Մրցութային աշխատանքները պետք է ներկայացնել մինչև 2013 թվականի հունիսի 15-ը: Ներկայացվող աշխատանքները կարող են լինել հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով՝ համակարգչային 4 - 5 էջի սահմանում:

Աշխատանքները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով Word ֆորմատով: Աշխատանքները կարող են ներկայացվել նաև անձամբ կամ ուղարկվել փոստով

Մրցութային աշխատանքին պարտադիր է կցել մասնակցի անձնական տվյալները պարունակող տիտղոսաթերթ.

- Ազգանուն
- Անուն
- Հայրանուն
- Ծննդյան թիվը
- Բնակության հասցեն
- Հեռախոսը
- Էլեկտրոնային փոստի հասցեն
- Ուսումնական հաստատության անվանումը, վայրը, հասցեն և հեռախոսահամարը:

Աշխատանքները կարող են ներկայացվել մրցույթի կազմակերպիչների հասցեով՝

**Ռուսաստանի հայերի միության և Համաշխարհային հայկական կոնգրեսի հայաստանյան մասնաճյուղ**
Երևան, Տերյան 69
Հեռ. (37410) 51 04 42
(37410) 51 04 43
(37410) 51 04 40
Ֆաքս (37410) 51 04 41
Էլ. փոստ՝ **vladis@netsys.am**

կամ

***ՀՀ սփյուռքի նախարարություն***
*ՀՀ, Երևան, Վ. Սարգսյան 26/1*
*Էլ. փոստ՝ allarmenian@mindiaspora.am*

***ՀՀ կրթության և գիտության նախարարություն***
*ՀՀ, Երևան, Գլխավոր պողոտա, Կառավարության III շենք, 611 սենյակ*
*Էլ. փոստ՝ kgnhanrakrtutun@mail.ru*

***Մրցույթի կազմկոմիտե***

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալ ցանկացողների համար:

Դասընթացները կկազմակերպվեն Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Վերապատրաստման դասընթացներին կարող է մասնակցել այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն եւ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական, գիտամանկավարժական աշխատանքի կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն յոթ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

Վերապատրաստմանը մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝

1) դիմում՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորի անունով (ձեւ 1, լրացվում է տեղում).

2) 3x4 չափի 2 լուսանկար.

3) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը 2 օրինակ.

4) աշխատանքային գրքույկի պատճենը կամ քաղվածքը 2 օրինակ.

5) անձնագրի պատճենը 2 օրինակ.

6) մասնագիտական գիտելիքներն ու գործնական կարողությունները հավաստող այլ փաստաթղթեր (գիտական աշխատություններ, հրապարակումներ կամ դրանց ցանկը) 2 օրինակ.

7) «Անելիք բանկ» ՓԲԸ-ում Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 11800033791500 հաշվեհամարին փոխանցված գումարի անդորրագիրը:

Փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակի հետ միասին: Պատճենների իսկությունը որոշելուց հետո բնօրինակները վերադարձվում են:

Դասընթացի տեւողությունը 15 օր է՝ 90 ժամյա տեւողությամբ: Վերապատրաստման դասընթացի արժեքը 55.000 ՀՀ դրամ է՝ առանց ճաշի եւ սուրճի ընդմիջման:

Դասընթացները կվարեն տնօրենների վերապատրաստման մեծ փորձ ունեցող մասնագետները:

Դիմումներն ընդունվում են ս.թ. մարտի 11-ից 25-ը:

Դասընթացները սկսվելու են ապրիլի 1-ից եւ ավարտվելու են ապրիլի 15-ին (ներառյալ շաբաթ եւ կիրակի օրերը):

*Երեւան, Տիգրան Մեծի 17, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, 2-րդ հարկ, 215 սենյակ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 16:30-ն: Հարցերի դեպքում զանգահարել՝ 010-59-70-29, կամ գրել հետեւյալ էլ. փոստով՝ intercoop85@mail.ru.*

# Հրապարակային ծանուցում

ՎՏԲ-Հայաստան բանկը ՓԲԸ հայտարարում է բաց մրցույթ Բանկին ռադիոալիքներում գովազդային ժամանակի տրամադրման համար մեդիա գործակալություն կամ ռադիոկայան ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ ռեզիդենտ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք, որոնք ունեն անհրաժեշտ տեխնիկական ֆինանսական միջոցներ:

Մրցութային առաջարկություններն անհրաժեշտ է ներկայացնել ՎՏԲ - Հայաստան Բանկը ՓԲԸ՝ ՀՀ, ք. Եր ան, 0010, Նալբանդյան փող., շ. 46 հասցեով:

Մրցութային հայտերն ընդունվում են մինչ 2013թ. ապրիլի 18-ը ներառյալ, ժամը 17:00:

Մրցութային հայտերի բացումը տեղի կունենա 2013 թ. ապրիլի 19-ին, ժամը 17:00-ին:

Մրցույթին մասնակցելու հրավերն ու Մրցույթի պայմանները տեղադրված են ՎՏԲ-Հայաստան բանկ ՓԲԸ ինտերնետային կայքում՝ www.vtb.am:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել ՎՏԲ-Հայաստան Բանկը ՓԲԸ Գովազդի հասարակայնության հետ կապերի բաժին:

Կոնտակտային անձ՝
Լուսինե Սուսանյան
Հեռ. +(37410) 51-37-49, ներքին՝ 8 3302
Էլ. փոստ՝ l.susanyan@vtb.am
Հեղինե Մելքումյան
Հեռ. (+37410) 51-37-16
Էլ. փոստ՝ h.a.melkumyan@vtb.amrությունը հայցում է Ձեր ներողամտությունը պատճառված ժամանակավոր անհարմարությունների համար:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 15.3.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: